


Վ. ԳՐԻԳՈՐՅԵՎ

ԻՆՉՊԻՍԻ ԿՈՆՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԵՆ ԼԻՆՈՒՄ ՅԵՎ  
ԻՆՉՊԵՍ ԵՆ ՆՐԱՆՔ ԿԱՌՈՒՑՎՈՒՄ




ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1929



338.1K

ԻՆՉՊԻՍԻ ԿՈՆՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ-  
ՆԵՐ ԵՆ ԼԻՆՈՒՄ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ  
ԵՆ ՆՐԱՆՔ ԿԱՌՈՒՑՎՈՒՄ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ — 1929

ՊԵՏՏՐԱՏԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՊԱՐԱՆ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Պատվեր № 844 Հր. № 1047 Տիրած 5000 Գրառեպլար № 2218 Բ.



«Ման, գյուղացիութեան նկատմամբ  
մեր խնդիրը նախ և առաջ կայանում է  
ներանում, վոր նրանց մասնավոր ար-  
տադրութիւնը և մասնավոր սեփակա-  
նութիւնը վերածենք ընկերականի,  
բայց վոչ հարկադրաբար, այլ որինակի  
և այս նպատակի համար հասարակական  
օգնութիւն առաջարկելու միջոցով:

Ֆ. Մեզիս

## Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Կուսակցութեան լողունքը՝ «Զբաւորներ և մի-  
ջակներ, առաջ, դեպի խոշոր կոլլեկտիվ հողագործու-  
թիւն» — լայն արձագանգ գտաւ խորհրդային գյու-  
ղում: Միայն 1928 թ. գարնան գյուղատնտեսական  
կամայանիւթի ընթացքում պարզագուցն արտադրա-  
կան միավորումների և կոլտնտեսութիւնների քանա-  
կը համարյա թե կրկնապատկւեց: Բայց նոր կոլտն-  
տեսութիւնների շինարարութիւնը հանդիպում է մի  
հիմնական արգելքի, և այդ ալն է, վոր գյուղի չը-  
քավոր-միջակ լայն մասսաները բավարար չափով ծա-  
նոթ չեն կոլլեկտիվ միավորումների գոյութիւնն ու-  
նեցող ձևերին, և գյուղացիները հաճախ ուղղակի չգի-  
տան, թե ինչպիսի կոլլեկտիվներ են լինում և ինչպես  
են նրանք կառուցվում: Մյուս կողմից կուլակները և  
նրանց համախոհները, վորոնց հաշվին չի գալիս կոլ-

լեկտիվացումը, վորն ինքնուրույն ճանապարհ ե բացում գլուղի չքավոր-միջակի զարգացման համար և վորը չքավորներին, միջակներին ազատում ե կուլակներից կախում ունենալուց, ամեն տեսակի անհեթեթ լուրեր են տարածում կոլլեկտիվ տնտեսությունների մասին:

Այս բոլորն տնհրաժեշտ ե դարձնում տալ գլուղին մի գրքուկ, վորն ընդհանուր ձևերով ծանոթացնի կոլտնտեսությունների շինարարության հիմնական ձևերին և միանալ ցանկացող գլուղացիներին հրնարավորություն տա ընտրելու իրենց համար միավորման ամենաընդունելի ձևը:

Հենց այս նպատակն ե դնում իր առաջ այս գրքուկը: Կոլտնտեսությունների ղանադան ձևերի շինարարության խնդիրները մանրամասն քննել այստեղ անհնարին ե, վորովհետև այդ դեպքում պետք էլինեի ավելի մեծ գիրք գրել:

Հեղինակ

## I. ԱՆՀԱՏՈՐԵՆ, ԹԵ ԱՐՏԵԼԻ ՄԻՋՈՑՈՎ

Մեզանում մի տեսակ սովորութիւնն է դարձել ասել, վոր մեր յերկիրը չքավոր է, աղքատ: Բայց մեր այդ աղքատութիւնն առանձնապես աչքի յե ընկնում, յերբ դիտում ես, թե ինչ ենք ստանում բնութիւնից մենք, և ինչ են ստանում մեր հարեան յեվրոպական յերկրները:

Դանիայում մեկ հեկտար տարածության ցորենի միջին բերքը հավասար է 33 կվինտալի, Բելգիայում՝ 25 կվինտալի, Գերմանիայում և Հոլլանդիայում՝ 24 կվինտալի, Անգլիայում՝ 21 կվինտալի և մեզ մոտ՝ 8 կվինտալի, այսինքն՝ չորս անգամ ավելի քիչ, քան Դանիայում: Հաճարի միջին բերքը մեկ հեկտար տարածութիւնից հավասար է Բելգիայում՝ 23 կվինտալի, Գերմանիայում և Անգլիայում՝ 17, մեզ մոտ՝ ԽՍՀՄ մեջ՝ 7:

Վարսակի միջին բերքը մեկ հեկտար տարածութիւնից հավասար է Բելգիայում՝ 25 կվինտալի, Անգլիայում՝ 19, Գերմանիայում՝ 16, մեզ մոտ՝ 8: Վերջապես կարտոֆիլի միջին բերքը մեկ հեկտար տարածութիւնից հավասար է Նորվեգիայում 198 կվինտալի, Գերմանիայում՝ 148, մեզ մոտ՝ 96:

Նույն պատկերն է նաև գլուղատնտեսության ու-

ըրէ ճյուղերում: Յեվրոպական մի փոքրիկ յերկիր՝  
Դանիան, ունենալով 1,400,000 կով, ամեն տարի ար-  
տահանում է 128 միլիոն կիլոգրամ յուղ: Մեզ մոտ՝  
ԽՍՀՄ-ում 28 միլիոն կով կա, իսկ արտահանում ենք  
միմիայն 48 միլ. կիլոգրամ յուղ: Սրա պատճառն այն  
է, վոր արտասահմանում գյուղատնտեսությունն ու-  
ժեղ կերպով մեքենայացման և յենթարկված և տար-  
վում և զլխավորապես խոշոր ձեռնարկությունների  
միջոցով, իսկ մեղանում դեռևս վարի գործիքների  
40 տոկ. արորն է, չափազանց տարածված և յեռադաշ-  
տային սիստեմը, մեր գյուղատնտեսական ձեռնարկու-  
թյունների գերակշռող մեծամասնությունը գյուղական  
մանր տնտեսություններն են, վորոնք, ինչպես կանոն,  
իրենց արամադրության տակ ունեն չնչին հողամասեր:

Յեթի Դանիայում ցորենի բերքը չորս անգամ  
ավելի շատ է, քան թէ մեզանում, այստեղ խնդիրը  
նրանումն է, վոր մեր գյուղացիական տնտեսություն-  
ներն իրենց արամադրության տակ չունեն այն տեխ-  
նիկոն, վորը գոյություն ունի Դանիայում:

Յեթի մեղ մոտ չնչին արտադրողականության  
պայմաններում գյուղացու աշխատանքն անտանելի  
ծանր է, պատճառն այն է, վոր մեր գյուղացին իր  
մեջքի վրա յի տանում այն ծանր աշխատանքը, վո-  
րը նույն Դանիայում վաղուց իվեր մեքենան է կա-  
տարում:

Մեր և աչքի ընկնող կապիտալիստական յերկր-  
ների տեխնիկայի մեջ յեղած տարբերությունը կա-  
րելի յի տեսնել հետևյալ թվերից. մեզանում— ԽՍՀՄ  
միջին թվով բնակչության մեկ հոգու համար մե-  
քենայի ուժ ոգտագործվում է 88 միավոր, Գերմա-



նիալում՝ 571, Անգլիայում՝ 935 միավոր, Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում՝ 1818 միավոր, Նորվեգիայում՝ 2011 միավոր: Խնչպես տեսնում եք, համեմատած նշված յերկրների հետ, մենք Համադանց քիչ ենք ոգտագործում մեքենան: Այնտեղ, վորտեղ անգլիացին, գերմանացին, ամերիկացին աշխատում են մեքենայով, մենք մեր մեջքն ենք գործի դնում: Այդ յերեում ե նրանից, վոր միջին հաշվով բնակչու-թյան մեկ հոգու համար ոգտագործվում ե կենդանի ուժ, աշխինքն՝ մարդկանց և անասունների ուժ՝ մի-զանում 181 միավոր, Գերմանիայում՝ 93 միավոր, Նորվեգիայում 90 միավոր, Անգլիայում՝ 57 միավոր:

Թե վորքան քիչ ե մեքենայացված գյուղատնա-տությունը, համեմատած, որինակ՝ Գերմանիայի հետ, կարելի յե տեսնել նրանից, վոր 1927 թ. Գերմանիան յիր գյուղատնտեսության մեջ ուներ 10,000 աշխատող տրակտոր, մինչդեռ մեզանում դրանց թիվը հաշվվում եր մոտ 20,000: Բայց պետք ե աչքի առաջ ունենալ, վոր Գերմանիան բացի տրակտորներից ուներ նաե շոգեշարժ գութաններ և ֆրեյերներ, վոր մենք դրեթե չունենք, և վոր Գերմանիայի տարածությունը հավա-տար ե միայն Արխանգելսկի նահանգին:

Իսկ յեթե վերցնելու լինենք Հ. Ա. Միացյալ Նա-հանգները, այդ դեպքում տարբերությունն ավելի մեծ կլինի: Այնտեղ 1916 թվականից մինչև 1924 թվակա-նի ժամանակամիջոցում վաճառված ե յերկրի ներ-սում 790.847 տրակտոր, իսկ մեզանում մինչ հեղա-փոխությունը առհասարակ տրակտորներ համարյա թե չկային: Տրակտորների գործածությունը մեղա-նում սկսվել ե միայն 1921 թվից, և մինչ 1924 թիվը



մեր գյուղատնտեսության մեջ գործի դրված արակ-  
տորների քանակը 3100 եր, հաշված թե՛ արտասահ-  
մանից ստացվածները և թե՛ լերիլի ներսում պատ-  
րաստվածները: 3000 և 800.000— իբոք վոր տարբե-  
րությունը հսկայական և:

Այս բուրից պարզ է խՍՀՄ-ի և արտասահմանի  
բերքերի մեջ չիղած ոչն հսկայական տարբերությու-  
նը, վորը մենք նշեցինք վերևում:

Դեռ միայն այդ չե, վոր բերքը մեղ մոտ ավելի  
քիչ է, քան արտասահմանում: Այժմս մեղ մոտ բեր-  
քատվությունը, ընդհանուր առմամբ վերցրած միջին  
հաշվով, վողջ խՍՀՄ-ում մինչև իսկ ավելի ցածր և  
այն բերքատվությունից, վոր գոյություն ուներ նախ-  
կին, մինչհեղափոխական ցարական Ռուսաստանում:

Հացի ընդհանուր բերքը մեղանում ավելի քիչ  
և մինչպատերազմյան շրջանի հետ համեմատած վող  
միայն նրա համար, վոր լրիվ կերպով չի վերականգ-  
նվել ցանքսի տարածությունը (վերականգնումը չըն-  
չին և), այլ գլխավորապես հենց այն պատճառով, վոր  
բերքատվությունը մեղ մոտ պակասել է: Յեթե վեր-  
ցընելու լինենք թվերը, դուրս է գալիս, վոր հողի  
ընդհանուր բերքը մինչ պատերազմը բաշխվում եր այս  
կերպ— ընդհանուր բերքի 12 մասը տալիս էյին կալ-  
վածատիրական տնտեսությունները, 38 մասը՝ կու-  
լակային տնտեսությունները և 50 մասը՝ միջակ և  
չքավոր տնտեսությունները:

Հեղափոխությունը սրբեց կալվածատերերին և ու-  
ժեղ կերպով փետրահանեց կուլակին: Կալվածատերե-  
րից և կուլակներից գրավված հողն անցավ չքավոր  
և միջակ գյուղացիության ձեռքը: Գլխավորապես նախ-

կին կալվածատիրական հողի վորոշ, աննշան մասն անցավ խորհրդային և կոլլեկտիվ տնտեսություններին: Յեւ 1:26—27 թվականներին հացի ընդհանուր բերքի չերկու մասը տալիս ելին խորհրդային և կոլտնտեսությունները, 13 մասը՝ կուլակային տնտեսությունները, 85 մասը՝ միջակ և չքավոր տնտեսությունները: Ինչպես տեսնում եք, չքավորների և միջակների դերը հացի արտադրման գործում զգալիորեն բարձրացել է: Այս և հեղափոխության անկասկած հաջողութունը: Բայց կա մի խնդիր, վորի մասին պետք է լուրջ մտածել:

Վոչ մի յերկիր չի կարող հաջողությամբ զարդանալ, չեթե արտադրվածը հենց իրենք՝ արտադրողներն սպառեն: Փոխանակութուն պետք է լինի: Հաց արտադրող գյուղացին կարիք է զգում արդյունաբերական ապրանքների, վորոնց ստեղծող բանվորը կարիք է զգում հացի:

Այդ իսկ տեսակետից մեծ նշանակություն ունի գյուղատնտեսության՝ այսպես կոչված՝ ապրանքայնությունը, այսինքն՝ գյուղատնտեսության ընդհանուր արտադրանքի այն մասը, վորը հանվում է վաճառքի: Բանից դուրս և գալիս, վոր մինչդեռ պատերազմից առաջ այդ մասը կազմում էր 26 տոկ., այսինքն՝ շուկա յեր հանվում հացի ընդհանուր արտադրանքի 26 տոկոսը, այժմս նա իջել է մինչև 13 տոկ.: Յեւ այս անկումը գլխավորապես բացատրվում է նրանով, վոր անհետացել են կալվածատիրական և կուլակային տնտեսությունները, վորոնք մինչև պատերազմից առաջ հայթայթում ելին ապրանքային հացի մեծ մասը: Մինչդեռ մինչ պատերազմը չքավոր և միջակ տնտե-

սության ապրանքայնությունը հավասար եր 14 տոկոսի, կուլակային տնտեսության ապրանքայնությունը հասնում եր 34 տոկոսի, իսկ կալվածատիրական տնտեսության ապրանքայնությունը՝ 47 տոկոսի: Այս հեշտ ե հասկանալու կուլակների և կալվածատերերի ձեռքին եր ամբողջ հացի կեսը, մյուս կեսը պատկանում եր չքավոր և միջակ գյուղացիությանը: Բացի կալվածատերերի և կուլակների թիվը քիչ եր, իսկ միջակների և չքավորների թիվը հասնում եր միլիոնների: Ինչքան ել վոր կալվածատերերը և կուլակները հաց ուտելին, ելի նրա մեծ մասը մնում եր վաճառելու համար: Իսկ չքավորների և միջակների հացից դուրս գալով նրանց կերածը, սերմացուն և անտեսուհիների կերը՝ վաճառքի համար մնում եր միմիայն 14 տոկոս:

Կալվածատիրական և կուլակային տնտեսությունները ծաղկում ելին վոչ միայն՝ վորովհետե կալվածատերերը և կուլակները ծծում ելին բարակ գյուղացիների արյուն-քրտինքը, ալլե նրա համար, վոր այդ տնտեսությունները շատ հող ունեյին, խոշոր եյին, և այնտեղ հնարավոր եր կիրառել մեքենաներ և հողի պարարտացում:

Մինչ հեղափոխությունը մեր խնդիրներից մեկն եր՝ տապալել կալվածատիրոջ և կուլակին. այժմս, յերբ այդ տապալումն արդեն կատարվել ե, մեր նպատակներից մեկն ե՝ սոցիալիստական խոշոր հողագործության կառուցումը, այնպիսի նպատակ, վորն իրագործել հնարավոր և միայն գյուղական տնտեսության մեջ ուժեղ թափով մեքենաներ մտցնելու միջոցով:

Ծիծաղելի չե՝ նալ գնել փոքրիկ լճում ոգտա-



գործելու և ձի՝ չերեխայական սալակի համար: Վոչ պակաս ծիծաղելի չե՝ գնել գյուղատնտեսական բարդ մեքենա մանր, 2—3 հեկտար տարածութիւն ունեցող գյուղացիական տնտեսութեան կարիքներէ համար: Նպատակահարմար, այսինքն՝ ողտավետ կերպով հընարավոր և ոգտագործել մեքենան միայն բավականաչափ խոշոր հողամասի վրա: Այսպես, գիտնական գյուղատնտեսների հաշվով, սերմացան, հնձող, հավաքող մեքենաները ձեռնտու չե ոգտագործել մոտավորապես 65—70 հեկտար հողամասի վրա, արակտորը՝ 100 հեկտարի վրա, ձիափոցիւր՝ 90 հեկտարի վրա: Ուրեմն, վորպեսզի մենք հնարավորութիւն ունենանք բարձրացնելու մեր գյուղատնտեսութիւնը, անհրաժեշտ և վերակառուցել նրան՝ գյուղացիական մանր տնտեսութիւնները վերածել խոշորների:

Խոշոր գյուղատնտեսական ձեռնարկութիւնը մանրի դիմաց ունի մի շարք առավելութիւններ: Թվենք այդ առավելութիւններէ կարևորագուցնները.

1. Ինչպես մենք հենց նոր արդեն ասացինք, խոշոր ձեռնարկութիւնը հնարավորութիւն և տալիս ոգտագործելու գյուղատնտեսական մեքենաները:

2. Խոշոր տնտեսութիւններում հնարավոր և կատարել աշխատանքի բաժանում: Յեթե միայնակ գյուղացին իր տնտեսութեան մեջ ստիպված և զբաղվել ամեն ինչով, կատարել այնտեղ վողջ աշխատանքը, նախ և առաջ սրանից և, վոր աշխատանքը տուժում և: Հիշենք արհեստավորներին՝ կոշկակարներին, դերձակներին, փականագործներին. նրանք բոլորն և ունեն միևնուցն աշխատանքով չերկար ժամանակ զբաղված լինելու հետեանքով հմտութիւն: Հիշենք կալ-



վածատիրական տնտեսությունը. այնտեղ կային՝ աւսանապահներ, յուղագործներ, թռչնաբույծներ, ալգեգործներ և բանջարաբույծներ: Մի շարք տարիների ընթացքում շարունակաբար զբաղվելով միևնույն գործով, այդ մասնագետներն իրենց գործին կատարելապես ծանոթանում էին և կարող էին այն լավ հիմքերի վրա դնել:

Կարիք չկա ապացուցելու, վոր այդ տեսակի մասնագիտացումը հնարավոր չէ մտնել գյուղացիական տնտեսության մեջ, վորը պարզապես չի կարող կերակրել իր 2--3 հեկտարով բոլոր այս մասնագետներին:

3. Միայն խոշոր տնտեսություններում հնարավոր է իրապես, գիտական հողի վրա դնել գործը: Ութդաշտյան կամ տասներկու դաշտյան ցանքսաշրջանի ձևը մի փոքրիկ հողամասում մտցնելն անհնարին է հենց այն պարզ պատճառով, վոր ստացվում են հողի աննշան շերտեր:

4. Խոշոր ձեռնարկության մեջ շատ ավելի լրիվ, քան մանր տնտեսության մեջ, կոգտագործվեն ուղածղ տնտեսության մեջ ստացվող թափթփուկները:

5. Մեքենաների, շինությունների, անասունների և մանր ինվենտարի ծախսերը խոշոր ձեռնարկության մեջ ավելի քիչ կլինեն, քան մանրում: Գութանն անհրաժեշտ է և՛ 2 հեկտար հող ունեցող տնտեսության, և՛ թե խոշոր տնտեսության համար: Մի սեղոնում գութանը կարող է վարել 7-8 հեկտար հող: Մենք վերևում տեսանք, վոր ԽՍՀՄ-ում հաճարի բերքը միջին թվով հավասար է 7 կվինտալի մի հեկտարից: Ուրեմն, 8 հեկտարից հնարավոր է ստանալ 56 կվինտալ հաճար,

2 հեկտարից՝ 14 կվիճառալ: Գուլթանը միջին հաշվով արժե 10 ու., ուրեմն 8 հեկտարանոց տնտեսությունում գուլթանի արժեքը, յեթե հաշվենք մեկ տարվա համար, մեկ կվիճառալ հաճարի համար կկազմի մոտ 2 կոպ., մինչդեռ 2 հեկտար տնտեսությունում այդ ծախսը հավասար կլինի արդեն 7 կոպեկի:

Յեվ կամ մեկ ուրիշ որինակ՝ տնտեսական շինությունները: Պատկերացնենք մի խոշոր տնտեսություն, վորն ունի 20 կով, և նրա կողքին 10 մանր տնտեսություն, վորոնք ունեն մեկական կով: Խոշոր տնտեսությունում կլինի մեկ մեծ շինություն չորս հիմնական պատերով, իսկ մանր տնտեսություններում կլինի 20 հատ շինություն՝ նույնպես չորսական հիմնական պատերից կազմված: Յեթե ընդունենք, թե մեկ գլուխ անասունի համար անհրաժեշտ է  $4\frac{1}{2}$  քառակուսի մետր տարածություն, այդ դեպքում դուրս կգա, վոր խոշոր տնտեսության անասնարակի պատերի ընդհանուր յերկարությունը հավասար կլինի 50 մետրի, մինչդեռ 20 մանր տնտեսությունների անասնարակերի պատերի ընդհանուր յերկարությունը հավասար կլինի ամենաքիչը 170 մետրի, ինչքան ել վոր մանր հաշվումներ անենք:

6. Խոշոր տնտեսությունն ավելի լավ դրության մեջ է գտնվում նաև ապրանքների գնման և վաճառման տեսակետից: Բացի այն, վոր խոշոր տնտեսության մեջ հնարավոր է կազմակերպել գյուղատնտեսական արտադրանքների վերամշակումը, վորը բարձրացնում է այդ արտադրանքների արժեքը և ապահովում փչացումից, խոշոր տնտեսության համար ավելի հեշտ է իր արտադրանքների համար մշտական գնորդ գտնել:

Այսպէս, որինակ, ամենուրեք մեծ քանակութեամբ կաթ դնող քաղաքային հիվանդանոցները ձեռք տուած են կապվել խոշոր տնտեսութեան հետ, վորը հնարավորութեուն ե ունենում մատակարարելու բաւականաչափ կաթ:

7. Բանվորական ուժի ոգտագործումը խոշոր տնտեսութեան միջ ալիլի խնայողաբար ե, քան թե փոքրում: Առանձին բանվորի աշխատանքի արտադրողականութեունը խոշոր ձեռնարկութեան միջ շատ ալիլի բարձր ե: Իսկ այդ հանդամանքը, նախ ե առաջ, նվազեցնում ե գյուղատնտեսական արտադրութեան ինքնարժեքը. չերկրորդ, հնարավորութեուն ե տալիս ամեն մի առանձին բանվորի հանգստի ժամերն ալիլացնել ե այդ ժամերը կարելի չե ոգտագործել կուտուրական աշխատանքի համար:

Ահա այս կերպ ե դրված հիմնականում մանրի դիմաց խոշոր ձեռնարկութեան առաւելութեունների հարցը: Հեշտ ե նկատել, վոր խոշոր տնտեսութեունը հենց այն ե, ինչ մեղ հարկավոր ե, վորպեսզի դուրս գանք աղքատութեունից ե վոչ միայն հասնենք, այլե առաջ անցնենք կապիտալիստական չերկրների տեսնիկայից:

Յեւ հակառակը, մեղ չերեք չի հաջողվի ունենալ խոշոր հաջողութեուններ, մեղ չերեք չի հաջողվի ազատվել աղքատութեունից, քանի դեռ մեր գյուղական տնտեսութեան հիմքը կկազմի մանր ե մտնրագույն գյուղացիական տնտեսութեունը, վորտեղ տնհնար ե վոչ բարելավված ցանքափոխութեուն մտցնել ե վոչ գյուղատնտեսական մեքենաներ կիրառել:

Հապա ինչպէս կառուցենք այդ խոշոր տնտեսու-



թյունը, Թնչպես հնարավորութուն ստանանք ոգտա-  
դործելու նրա բարիքները: Պետքական կլինի արդյոք  
մեզ այդ դործում կապիտալիստական լերկրների և ցա-  
րական Ռուսաստանի որինակը: Ցարական Ռու-  
սաստանում խոշոր տնտեսությունը կառուցվում  
էր, իսկ կապիտալիստական լերկրներում մինչև  
հիմա չէլ կառուցվում և չքավոր գյուղացիությու-  
նը կալվածատերերի և կուլակների կողմից հարըս-  
տահարելու միջոցով: Կալվածատերերը և կուլակներն  
ունեն՝ հող, մեքենաներ, անասուններ. չքա վոր գյու-  
ղացիությունը վոչինչ կամ համարյա վոչինչ չունի:  
Կալվածատերերը և կուլակները թույլ են տալիս չքա  
վոր գյուղացիության մոտենալ Խրեբց հողին, անա-  
սունին և ինվենտարին, գրավելով իրենց ոգտին նը-  
րանց ծանր աշխատանքի ամբողջ արտադրանքը և տա-  
լով նրանց չնչին աշխատավարձ: Պարզ է, վոր խոշոր  
գյուղատնտեսական ձեռնարկությունների ստեղծման  
այս ճանապարհը մեզ չի սաղում: Կալվածատերերի  
հետ մենք մեր հաշիվը վերջացրինք սրանից 12 տարի  
առաջ, իսկ կուլակների դեմ կուսակցությունը և խոր-  
հըրդալին իշխանությունը ակտիվ պայքարում են՝ հնա-  
րավորութուն չտալով նրան զարգանալու: Գյուղատն-  
տեսության կապիտալիստական զարգացման ուղիի  
հաղթանարումը հանդիսանում է հեղափոխության մե-  
ծագույն նվաճումը, վորը մենք վոչ մի կերպ յետ  
չենք տա:

Բաց կամ արդյոք խոշոր գյուղատնտեսական ար-  
տադրության կառուցման մի ալ ճանապարհ, վորտեղ  
չաճեր գյուղական մասսաների չքավորությունը, չհա-  
րըստանային կուլակն ու կալվածատերը, այնպիսի



ճանապարհ, վորի շնորհիվ բարձրանար ԽՍՀՄ-ի բազմամիլիոն գյուղացիական մասսայի բարեկեցությունը:

Այդպիսի ճանապարհ կա. այդ՝ կոլլեկտիվացումըն է, առանձին, մանր-գյուղացիական տնտեսությունների միացումն է յեվ խոշոր գյուղատնտեսական արդյունաբերական արտադրական կոլլեկտիվներ (կոլտնտեսություններ) դարձնելը իրենց հողը, անասունը, ինվենտարը յեվ բանվորական ուժերը միացնելու ճանապարհով:


Այս ճանապարհին մենք ստանում ենք տնտեսություններ, խոշոր տնտեսությունների բոլոր առավելություններով, բաց կուլակային և կալվածատիրական տնտեսություններից նրանով խիստ տարբերվող, վոր մինչդեռ կալվածատիրական և կուլակային տնտեսություններում տեր են հանդիսանում կուլակն ու կալվածատերը, իսկ մնացածները՝ բատրակ-աշխատավորներ—կոլլեկտիվ տնտեսություններում (կոլտնտեսություններում) տեր հանդիսանում են տվյալ տնտեսության մեջ բոլոր աշխատողները:

Հարկավոր է լուրջ դնել և մտածել, այ, ես հարցի մասին: Մեր գյուղատնտեսության մեջ ներկայումս ուժեղ պայքար են մղում խիստ հակառակ յերկու կողմեր. մեկ կողմը ձգտում է կոտորակել, մանրացնել տնտեսությունները: Այս պիժը կուլակին է չահ, վորովհետև մանրացումը ել ավելի ուժասպառ է անում առանց այն ել թույլ տնտեսությունները, վորովհետև այդ մանրացումը մանր-գյուղացիական տնտեսությունը կուլակից կախման մեջ է դնում: Մյուս կողմը կոլլեկտիվացմանը, մանր-գյուղացիական տնտե-

սությունների խոշորացմանն և ձգտում։ Այս գծի  
շնորհիվ կուլակը վոչնչանում և, քանի վոր կու-  
լեկտիվացրած միացած գյուղական տնտեսություն-  
ները կարիք չեն զգա կուլակին և շահագործման  
չեն գնա նրա մոտ։ Հարցն այսպեո և դրված։ Կու-  
սակցությունը և բանվոր դասակարգը կոչ են ա-  
նում գյուղացիներին գնալու այս լերկրորդ ճանա-  
պարհով, միակ ճանապարհով, վորով մենք կամրա-  
դնդենք հեղափոխության նվաճումները։

16403 A  $\frac{I}{4282}$

—



## II. ԻՆՉՊԻՍԻ ԿՈՆՏԵՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՆ ԼԻՆՈՒՄ

Մի հայտնի հեքիաթ կա: Խոսքը աչնտեղ մի ծերունու մասին է, վոր մեռնելուց առաջ կանչել էր իր վորդիներին և տվել նրանց կտորելու ավելի ճիպոտները. նրանք կտորում էին ցախերը և չէին կարողանում հասկանալ, թե ինչ էր իրենց հոր ուղածը: Իսկ յերբ կտորատեցին, հայրը մեկնեց նրանց ավելը և ասաց. «Կտորատեցեք այժմ ավելը»: Նրանք փորձեցին, բայց բան դուրս չեկավ: Մերունին ասաց. «Նմանապես և դուք. յեթե ջուկ-ջուկ ապրեք՝ կարիքը կարող ե ձեզ կտորատել, իսկ յեթե միասին լինեք՝ այդ դեպքում կարիքը չի կարող հաղթահարել ձեզ այնպես, ինչպես դուք չկարողացաք հաղթել այս միատեղ կապված ճիպոտները»:

Դժվար ե ասել, թե ով և յերբ ե հնարել այս հեքիաթը, բայց նա ակամա հիշվում ե այժմ, յիրբ խոսքը վերավերում ե կոլտնտեսութուններին: Կոլտնտեսութունը այդնույն ամուր և հուսալի ավելն է, վորի ոգնությամբ իրենք գլուղացինիրը քաղաքի բանավորների և լենինյան բալլևիկյան կուսակցության ղեկավարության ներքո կկարողանան բոլորովին սրբել կուլակին և վերակառուցել գլուղական տնտեսութունը սոցիալիստական նոր սկզբունքների հիման վրա:

Բայլեկիկները հասկանում են, վոր գլուղացին  
 չի եղ ընտելացել արտելային աշխատանքի։ Դարեր  
 շարունակ ադան նրա շնքին եր նստած, դարեր շա-  
 րունակ նա վախեցել ե աղաչից, կուլակից ե վոստի-  
 կանից։ Վոչվոքից ոպնություն չի տեսել ե սովորել  
 ե հույսը դնել միայն իր վրա։ Մեկից դժվար ե նրա  
 համար անցնել արտելի ե կամ կոմմունայի, սկսել աշ-  
 խատել միասին ե վոչ անհատորեն։ Յեվ վորպեսզի  
 գլուղացին կարողանա կամաց-կամաց ընտելանալ ար-  
 տելային աշխատանքի՝ կազմակերպվում են զանազան  
 կուլեկտիվներ։ Սրանցից միքանիսն սկզբում միաց-  
 նում են գլուղացիական աշխատանքի մի վորեւ մա-  
 սը։ Վստան կարելի չե ասել, վոր ամեն մի գլուղում  
 իր ժամանակին պատահած կլինի աչնպիսի մի դեպք,  
 վոր, յերբ ջրաղացպանը բարձրանցում ե աղալու վար-  
 ձը, գլուղացիները հաչոյել են, անիծել են նրան, ա-  
 սել են, վոր ուժից բարձր ե այսպիսի վարձատրու-  
 թյուն տալը ե այլն։ Բայց նման դեպքերից քանի-  
 սում դժգոհները գլխի չեն ընկել միանալ, հավաքել  
 կոպեկներ ե կառուցել հասարակական ջրաղաց։ Յեվ  
 վերջապես հարցը միայն ջրաղացի խնդիրը չե։ Ամեն մի  
 գործ, վորի վրա նստել ե կուլակը ե հարստանում ե  
 գլուղացիական կարիքների հաշվին, ամեն մի նման  
 գործ կարելի չե հաղթահարել միանալու միջոցով։  
 Յեվ բացի այս կուլակային «արդունագործությու-  
 նից» ինչպիսի կարեոր գործեր կան գլուղում, վոր վոչ  
 վոք պարզապես չի անում այն բանի համար, վոր ան-  
 հատորեն վոչվոք չի կարող հաղթահարել, իսկ արտե-  
 լի միջոցով միանալ, գործ անել գլխի չեն ընկնում։  
 Զարմանալի չե, վոր կուսակցության ե խորհրդային



իշխանութեան կոչը՝ արտադրական միավորներ կազմակերպելու մասին լալն արձագանգ գտաւ գլուղում։ Գլուղացիները տեսնում են և չեն ել կարող չտեսնել, վոր միացումը, անկասկած նրանց մեծ ոգուտ ե բերում։

Այժմ քննենք, թե ինչպիսի միացումներ են լինում։

### ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊԱՐԶԱԳՈՒՅՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐ.

Կան կոլեկտիւներ, վորտեղ հողը մշակվում ե ընդհանուր ուժերով։ Հենց դրանք են, վոր կոչվում են կոլտնտեսութեաններ։ Ավելի պարզ կոլեկտիւներում միացվում են գլուղացիական տնտեսութեան այլ ճյուղերը. հողին նրանք ձեռք չեն տալիս և կոչվում են պարզ արտադրական խմբավորումներ։ Այս տեսակի միավորումների շարքին են պատկանում նախ և առաջ զանազան տեսակի անասնապահական խմբավորումները։ Գլուղացիները համախմբվում են, որինակ՝ ընդհանուր ուժերով դնելու և պահելու ազնվացեղ կինդանիներ։ Զոկում են, որինակ՝ մի հարմար ցուլ, իմանում են նրա գինը, դրամ են հավաքում և գնում են, և ապա հերթով պահում են նրան։ Յեւ կամ վորոշում են՝ լավ հիմքերի վրա դնել անասնապահութեանը. պահում են անասուններին տաք գոմերում։ Տաք գոմը բարձրացնում ե կովի կաթի քանակը, ուրեմն ոգուտ ե բերում։ Բայց այդ գոմը կառուցելու համար հարկավոր են միջոցներ։ Այս տեսակետից ավելի ձեռնտու չե կառուցել մի ընդհանուր տաք գոմ միջանի տնտեսութեան համար, քան թե կառուցել մանր գոմեր յուրաքանչյուր տնտեսութեան մեջ։ Յեւ

անհա համախմբվում են միջանի տնտեսութիւնն և ընդհանուր ուժերով անուամ ալդ գործը:

Այժմս շատ են կազմակերպվում ուրիշ տեսակի արտադրական պարզագույն խմբավորումներ – մելիորատիվ ընկերութիւններ: Նրանց գլխավոր նպատակն է՝ չորացնել ճահիճները և վոռոգել անջրդէի դաշտերը: Նրանք ջրհոր, կամուրջներ եւ են կառուցում, պայքարում են փոսերի և ավազուտների դեմ:

Հաճախ պատահում է, վոր վողջ գյուղը ճահիճների համար դարերի ընթացքում չարչարվում է: Հող նրանք շատ ունեն, բայց ոգուտ չունի, նույնիսկ անասուններին արածացնելու տեղ չկա: Նրանք միշտ խոսում են ճահիճը չորացնելու մասին: Այսպիսի գործ անհատորեն անհնար է սկսել. յեթե չորացնել ճահիճը, լավ է միանգամից, ամբողջութեամբ չորացնել: Այս դեպքում լավագույն ոգնութիւնը կարող է ցույց տալ մելիորատիվ ընկերութիւնը: Հարկավոր է համախմբել, հավաքել փաշավճարները, ձեռք բերել քաղաքից վարկ, տեխնիկներ, մեքենաներ, և ճահիճը կը վերածվի պետքական հողի:

Մելիորատիվ ընկերութիւնները սովորաբար մեծ են լինում: Վորովհետեւ ճահիճը մաս-առ-մաս չորացնել չի կարելի, այդ իսկ պատճառով մելիորատիվ ընկերութեան մեջ սովորաբար մտնում են բոլոր այն տնտեսութիւնները, վորոնց պատկանում է այն հողը, վորը մելիորատիվ ընկերութիւնը նպատակ է դրել վոռոգել կամ չորացնել: Ծիշտ է, կարող է նաև պատահել, վոր միջանի տնտեսութիւններ չցանկանան մտնել ընկերութեան մեջ: Այդ դեպքում մելիորատիվ ընկերութիւններին ոգնութեան է գալիս որենքը, վո-

րի համաձայն, յեթե հասարակության մեծամասնու-  
թյունը համաձայն է կազմակերպել մեկիորդատիվ ըն-  
կերություն, փոքրամասնությունը պարտավոր է չնը-  
թարկվել մեծամասնության և մոտեւ մեկիորդատիվ ըն-  
կերության կազմի մեջ:

Մեկիորդատիվ ընկերություններից ավելի շատ է  
մեքենաոգտագործական ընկերությունների թիվը:  
Յեթե մեկիորդատիվ ընկերությունները կարող են կազ-  
մակերպվել միայն այնտեղ, վորտեղ ճահիճներ, չոր  
տեղեր կան, մեքենաոգտագործական ընկերությունով  
շահադրգոված է ամեն մի գյուղացի: Նամանավանդ,  
վոր այդ տեսակետից պետությունն էլ է ընդառաջ գը-  
նում գյուղացիներին: Բոլոր այն մեքենաները, վո-  
րոնք 12 ո. թանգ արժեն, վարկով են տրվում գյու-  
ղացիներին: Սերմացուն, տրիերները (սերմագաիչ),  
խուրձ կապող և կալսող բարդ մեքենաները վարկով  
են տրվում չորս բերքաշրջանի համար, կաթնատնտե-  
սական մեքենաները վարկով են տրվում չերկու բեր-  
քաշրջանի համար, իսկ մնացած բոլոր այն մեքենա-  
ները և գործիքները, վորոնք 12 ո. թանգ արժեն,  
տրվում են վարկով չերեք բերքաշրջանի համար:

Որինակի համար՝ յեթե ընկերությունը ցանկա-  
նում է գնել սերմացան մեքենա, այդ դեպքում գըն-  
ման ժամանակ նա վճարում է արժեքի միայն 10<sup>0</sup>/<sub>0</sub>-ը,  
առաջին բերքից հետո՝ արժեքի 20<sup>0</sup>/<sub>0</sub>, չերկրորդ բեր-  
քից հետո՝ 30<sup>0</sup>/<sub>0</sub>, չերրորդ բերքից հետո՝ 25<sup>0</sup>/<sub>0</sub> և չոր-  
րորդ բերքից հետո՝ 15<sup>0</sup>/<sub>0</sub>:

Մեքենաոգտագործական ընկերություններ կազ-  
մակերպելու ոգուտը կայանում է նախ և առաջ նրա-  
նում, վոր այս միջոցով գյուղացիները կարող են ոգ-



տագործել այն մեքենաները, վորոնց անհատորեն ձեռք բերելը գյուղացու ուժից վեր է, և ոգտագործումը գյուղացի անհատի փոքրիկ հողամասում մեծ մասամբ ձեռնտու չէ։ Մեքենաողտագործական ընկերության կազմակերպման ոգուտը կայանում է նաև նրանում, վոր ընկերության միջոցով կարելի չէ մեքենայի ամենամեծ բեռնավորման հասնել։ Վերցնենք այսպիսի մի որինակ. մեքենաողտագործական ընկերության մեջ համախմբված 20 գյուղացիական տնտեսությունն բոլորը միասին ունեն 100 հեկտար հող, Գութանը սովորաբար մեկ սեզոնում կարող է վարել 7—8 հեկտար հող։ Ուրեմն, մեքենաողտագործական ընկերությունն իր անդամների 100 հեկտար հողի համար պետք է ունենա 15 գութան։ 15 գութանով կվարվի բոլոր հողը։ Պարզ է, վոր չեթե այդ 20 տնտեսություններն աշխատեյին առանձին, համախմբված չլինեյին մեքենաողտագործական ընկերության մեջ, այդ դեպքում ամեն մեկ տնտեսության հարկավոր կլիներ մեկական գութան, այսինքն՝ 20 գութան։ Յեթե գութանի արժեքը միջին հաշվով գցենք 10 ռ., այդ դեպքում կստացվի, վոր մեքենաողտագործական ընկերության մեջ համախմբված 20 տնտեսությունները 50 ռ. կշահեն միայն գութանների մեջ։ Իսկ քանի վոր աշխատի տնտեսում կունենան բոլոր տեսակի մեքենաների նրկատմամբ, ուրեմն հասկանալի չէ, վոր շատ ձեռնտու չէ գյուղացիների համար համախմբվել մեքենաողտագործական ընկերությունների մեջ։ Բերենք յերկու որինակ։

Ալեյսակի մեքենաողտագործական ընկերությունը (Վորոնեժի նահանգ) կազմակերպվել է 1921 թը-



վականին: Յեւ անելուց հետո ստացան սերմավարկ: Ցորենը բերք տվեց մեկ հեկտարից 21 ցենտներ (ցենտները=մոտ 6 փութ 10 գր): Առանձնացրին մեկ հողամաս և սկսեցին աշխատել: Աշխատանքը շատ լավ եր գնում, մեքենաողտագործական ընկերությունը սկսեց ուժեղ կերպով զարգանալ: Այժմ նա արդեն ունի՝ տրակտոր, կալսող մեքենա, ջրաղաց, զոռոգ մեքենա:

Հյուսիսային Կովկասի «Կաղբեկ» մեքենաողտագործական ընկերության մեջ մտել ելին բացառապես չքավորները, նախկին կարմիր-բանակայինները: Նրանք հինգ տնտեսութուն ելին, բոլորը միասին ունեյին յերկու յեզ, յերկու կով: Վարկով վերցրին մեկ տրակտոր 3 տարի ժամկետով և նրա ոգնությամբ սկսեցին աշխատել: Այժմ արդեն, բացի տրակտորից, ունեն հնձող և կապող մեքենաներ:

Մենք նշեցինք արտադրական պարզագույն խմբավորումների միայն հիմնական տեսակները: Բացի այս արտադրական խմբավորումների հիմնական տեսակներից, գոյութուն ունեն նաև ուրիշ տեսակներ, ավելի քիչ տարածված, ինչպես, որինակ՝ տորֆի ընկերություններ, կրակի դիմացող շինարարության ընկերություններ, էլեկտրիֆիկացիայի ընկերություն, մանր գյուղատնտեսական ձեռնարկումներ (ջրաղաց, սղոցարան և այլն) կառուցելու և ոգտագործելու զանազան ընկերություններ: Ընդհանուր առմամբ հնարավոր է համախմբել գյուղացիական տնտեսության ամեն մի մասը, գյուղացիական ամեն մի կարիքը հընարավոր է ընդհանուր ուժերով հոգալ, միջանի շահագրգռված տնտեսությունների համախմբման միջոցով:

Ընդ վորում, ամեն մի նման խմբավորում, յեթե միայն նա ցուցակագրված և հողալին վարչությունում, պետությունից ստանում և վարկային, տեխնիկական և գյուղատնտեսական ոգնություն, ինչ վերաբերում և նրան, թե ինչ պետք և անել ցուցակագրման համար, մենք կխոսենք հետագայում, զբոսովի վերջում: Այժմ մոտենանք այն հարցին, թե ինչ և կոլտնտեսությունը, ինչ տեսակի կոլտնտեսություններ են լինում և ինչով են նրանք տարբերվում անհատական գյուղացիական տնտեսությունից և մեկը մյուսից:

### ԿՈԼԼԵԿՏԻՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կոլլեկտիվ տնտեսություն կամ կոլտոգ կոչվում են համախմբումների այնպիսի տեսակները, վորոնք հողը մշակում են միացյալ ուժերով: Արտադրական պարզագույն խմբավորումներն անհատական, գյուղացիական տնտեսությունների խմբավորումներն են մի վորևե ընդհանուր նպատակի համար, իսկ կոլտնտեսությունը հասարակ խմբավորում է, այլ՝ հասարակայնացրած տնտեսությունների խմբավորումն է: Ընդ վորում կոլտնտեսությունների ստորին տեսակներում, հասարակայնացրած տնտեսությունների կողքին գոյություն ունեն նաև անհատական տնտեսություններ, իսկ բարձր տիպի կոլտնտեսություններում անհատական տնտեսությունները բոլորովին չքանում են:

Հասարակայնացման աստիճանից յեղնելով՝ կոլտնտեսությունները բաժանվում են յերեք հիմնական տեսակի՝ 1) հողի հասարակական մշակման ընկիրու-

թյուն, 2) արտել, 3) կոմմունա: Այս յերեք տեսակի կոլտնտեսությունների տարբերությունը կարելի է տեսնել հետևյալ աղյուսակից.

1. Հողի հասարակական մշակման ընկերություն:

Ընդհանուր հող, հաճախ ընդհանուր մեքենաներ: Մնացած ամեն ինչ անդամների միանձնյա տիրույթն է:

2) Արտել:

Ընդհանուր հող, անասուն, մեքենաներ, գործիքներ, տնտեսական շինություններ: Անդամներին անհատորեն պատկանում են միայն բնակելի շինությունները և սպառման հետ կապված ամեն ինչ:

3) Կոմմունա:

Ամեն ինչ ընդհանուր, հաճախ ընդհանուր խոհանոց:

Իհարկե սրանք մոտավոր նշաններ են: Կյանքում հազվադեպ կարելի է պատահել այնպիսի կոլտնտեսության, վորը լրիվ կերպով ունենա այս հատկանիշները:

Շատ հաճախ, որինակ՝ կոլտնտեսությունը կազմակերպվում է, հողի հասարակական մշակման ընկերության կանոնադրության համաձայն, արագ աճում է, հասարակայնացնում է, ասենք, անասնապահությունը, բայց արտելի կանոնադրությունն ընդունում է ավելի ուշ, քան փաստորեն արտել է յեղել ըստ ելության: Յեվ կամ քիչ չեն այնպիսի դեպքերը,

յերբ արտելի կանոնադրության համաձայն գոյությունն ունեցող կոլտնտեսությունը չի հասարակայնացրել անասնապահությունը կամ հասարակայնացրել է տնտեսական վոչ բոլոր շինությունները: Շատ կոմմունաներ կան, վորտեղ կազմակերպված է ընդհանուր սեղան, և կան կոմմունաներ, վորտեղ դեռ մինչև հիմա ընդհանուր սեղան չկա, իսկ կան արտելներ, վոր ունեն ընդհանուր սեղան:

Վերջապես կուլտ-կրթական աշխատանքների, մանկական մսուրների և այլի կազմակերպումը, վոր պարտադիր է միայն կոմմունային, հաճախ գոյություն ունի հողի հասարակական մշակման ընկերություններում և արտելներում: Մենք հետապնդում կքննենք կոլտնտեսությունների առանձին տեսակները, յեղնելով վերև բերված աղյուսակից, վորը կազմված է կոլտնտեսությունների տիպիկ կանոնադրությունների համաձայն: Բայց ընթերցողը չպետք է այս գործն իրեն պատկերացնե իբրև անկենդան ձևեր: Կոլլեկտիվացումը շարունակ զարգացող շարժում է: Վոչ մի կոլտնտեսություն հասարակայնացման գործում կանգնած չի միևնույն տեղում: Նա ամբողջ ժամանակ բարձրացնում է (իսկ չերբեմն ել, բայց հազվագյուտ դեպքերում, նվազեցնում է) հասարակայնացումը: Այս պետք է ի նկատի ունենալ մեր բերած աղյուսակի քննության ժամանակ:

Այժմ քննենք կոլտնտեսությունների հիմնական տեսակներն առանձին-առանձին:

Նողի հասարակական մշակման ընկերություններ: Մենք քիչ առաջ խոսեցինք այն մասին, վոր դյուղացիների համար մեքենադատագործական ընկե-



րությունների մեջ համախմբվելը ձեռնտու չէ, և ապացուցեցինք, վոր ոգուտը քիչ չէ: Սակայն մեքենա-  
ոգտագործական ընկերությունը մի շատ խոշոր թե-  
րություն ունի: Բանը նրանումն է, վոր մեքենաների  
ընդհանուր ոգտագործումն ընդհանուր առմամբ ձեռն-  
տու չե ամեն տեսակի պայմաններում, բայց ավելի  
ձեռնտու չե, չեթե ընկերության անդամների հողերը  
գտնվում են միևնույն տեղում: Յեթե այդ բանը չկա,  
չեթե միեքենաոգտագործական ընկերությունների մեջ  
համախմբված տնտեսությունների հողերը ցաքուցրիվ  
և առանձին հողամասերը մեկը մյուսից հեռու յեն,  
այդ դեպքում մեքենաների մի հողամասից մյուսը  
փոխադրելու և աշխատանքի ժամանակ դարձումների  
վրա կորցրած ժամանակը թանգացնում է մեքենա-  
ների աշխատանքը և նվազեցնում է նրանց արտա-  
դրողականությունը: Գոյություն ունեցող մեքենաոգ-  
տագործական ընկերությունների փորձը ցույց է տա-  
լիս, վոր նրանց անդամները շատ շուտ են համոզվում,  
վոր ձեռնտու չե հողը միացնել և մի հողամաս կազ-  
մել: Իսկ այդ միացումը կատարելուց հետո նրանք  
անխուսափելիորեն սկսում են մտածել հողի հասարա-  
կական մշակման անցնելու մասին: Միանգամայն  
պարզ է, վոր չեթե հողը կենտրոնացած է մեկ տեղում,  
և մերեքաներն ընդհանուր են, ձեռնտու չե հողը բա-  
ժանել մասերի և մշակել առանձին-առանձին: Նախ և  
առաջ արհեստ և աչն հողամասը, վորը գնում է միջ-  
նակներին, չերկրորդ՝ չի վերանում աշխատանքի ժա-  
մանակ մեքենաների դարձումներ անելու անհրաժեշ-  
տությունը, յերրորդ՝ առանձին անդամների հողամա-  
սերում մեքենաների ոգտագործման հերթերի մասին

յեղած վեճերը ձանձրացնում են մարդկանց: Ավելի ձեռնտու յե ամբողջովին միացնել հողը, միացյալ ուժերով տանել նրա մշակումը և հավաքած բերքը բաժանել միմյանց մեջ: Ընդ վորում նախած, թե ինչքան մեքենա և ինչպիսի մեքենա յե հասարակայնացրած, դրանից ել կախված ե բերքի բաշխումը: Սովորաբար լինում ե այնպես, վոր չեթի ունեն մեկ ընդհանուր տրակտոր, միայն վարն ե կատարվում ընդհանուր ուժերով, իսկ հետո՝ վորոշելով վարած դաշտի սահմանները, ընկերության ամեն մի անդամ իրեն հողամասը մշակում ե առանձին: Ընդհանուր ուժերով սերմացան մեքենա ձեռք բերելը գործը շատ քիչ ե փոխում: Միացյալ ցանք անելուց հետո նմանապես վերականգնում են սահմանները և շարունակում են անհատորեն աշխատել: Յեթե գնված ե լինում ընդհանուր հնձող մեքենա, այդ դեպքում բաշխումը կատարվում ե ըստ խուրձերի: Կալսող մեքենա ձեռք բերելուց հետո հացահատիկը և դարմանն ե բաժանվում: Դաշտային աշխատանքներին մասնակցում են ընկերության բոլոր անդամները: Ընկերության անդամների ընդհանուր ժողովում ընտրված խորհուրդը հաշվի չե առնում ընկերության մեջ մտնող ամեն մի տնտեսության աշխատող ձեռքերը, անասունը և ինվենտարը: Համաձայն այս հաշվառման՝ խորհուրդը կարգ ե սահմանում, թե ամեն մի տնտեսություն ինչ ձևով և չերբ պետք ե մասնակցի ընդհանուր աշխատանքներում, հատկապես ինչ (բանվորական ձեռք, անասուն, ինվենտար), չերբ և ինչ քանակությամբ պետք ե ներկայացնի ամեն մի տնտեսություն: Սահմանված այս կարգն ուժի մեջ ե մտնում ընկերու-

թյան անդամների ընդհանուր ժողովի հաստատումից հետո:

Ընդհանուր ինվենտար ձևով բերելու համար հողի հասարակական մշակման ընկերությունը պետք է վոր ունենա միջոցներ: Այդ միջոցները կազմվում են այս կերպ. նախ և առաջ՝ իրենց՝ ընկերության անդամների միջոցները:

Ընկերության կազմակերպման ժամանակ ընդհանուր ժողովը վորոշում է ամեն մի անդամի համար պարտադիր մուտքի և փայավճարի չափը: Մուտքի վճարը ծախսվում է ընկերության կազմակերպչական ծախսերի համար (գրասենեկային պիտույքների գնում և ուրիշ), ընկերությունից դուրս չեկող անդամներից յետ չի վերադարձվում և սովորաբար սահմանվում է 1—2 ու: Փայավճարն, ընկերությունից դուրս գալու դեպքում, վերադարձվում է անդամին: Փայավճարի չափը սահմանելու ժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ այն, վոր դրամագլուխ կազմող միջոցներով հնարավոր լինի սկսել հասարակայնացրած տնտեսությունների աշխատանքները:

Սովորաբար լինում է այսպես: Այդն ընկերության կազմակերպման ժամանակ վորոշում են գնել տրակտոր, կամ տրակտոր և կալսող մեքենա, կամ ել այլ մեքենաներ: Այս դեպքում գնվելիք մեքենաների արժեքը բաժանում են հավասար չափով անդամների մեջ, և ամեն մի անդամ պարտավոր է մուծել այդ գումարը: Կարելի չէ նաև փայավճարը մուծել վոչ թե դրամով, այլ նատուրայով (հացահատիկով, ինվենտարով և այլն), չեթե, իհարկե, այդ բանի համար կա ընդհանուր ժողովի թույլատրությունը: Չքավոր տըն-



տեսութիւնները, վորոնք իվիճակի չեն մուծելու  
փայտվճարը, պետք է դիմեն մոտակա կոոպերատի-  
վին, այնտեղից վարկ խնդրեն, չքավորների կոոպե-  
րացման ֆոնդից, կամ թե, չեթե հնարավորութիւն  
կա, ընկերութիւնը պետք է վոր ժամանակ տա հե-  
տադաշու մաս առ մաս մուծելու փայտվճարը:

Ընդհանուր միջոցների կազմակերպման չերկրորդ  
ճանապարհը ավանդներն են: Ընդհանուր տրակտոր  
ձեռք բերելուց հետո խիստ պակասում է ձիերի կա-  
րիքը: Ընկերութեան մեջ մտնող չերկու ձի ունեցող  
տնտեսութեանը դուցե ձեռնտու չի չերկու ձի պահե-  
լը, իսկ ընդհանուր տնտեսութեան կարիքների համար  
ձին կարող է հարկավոր լինել: Այս դեպքում անդամը  
ձին ներկայացնում է ընկերութեանն իբրև ավանդ և  
ստանում է տվյալ ավանդի տոկոսները, ընդհանուր  
ժողովի կողմից վորոշված չափով: Նույնը կարող է  
պատահել վոչ միայն ձիու, այլև մեքենաների հետ,  
վորոնք նմանապես իբրև ավանդ հնարավոր է ներ-  
կայացնել ընկերութեանը: Կարող են լինել նաև դրա-  
մական ավանդներ, բայց միայն իրենց անդամներից:  
Ընդհանրապես այն ամենը, ինչ վոր անհատական  
տնտեսութեան մեջ անպետք է դառնում նրա՝ կոլ-  
տնտեսութեան մեջ մտնելուց հետո, այդ բոլորը ձե-  
ռքնառու չեն ներկայացնել կոլտնտեսութեանն իբրև ա-  
վանդ, քանի վոր կոլտնտեսութիւնն իր վրայ չէ վերցը-  
նում տնտեսութեան մի ամբողջ շարք կարևորագույն  
աշխատանքները: Դա ձեռնտու չե թե տնտեսութեանը  
և թե կոլտնտեսութեանը: Սովորաբար այդ կատար-  
վում է այս կերպ: Անդամը դիմում է ընկերութեան  
խորհրդին, թե նա ցանկանում է ընկերութեանն իբրև



ավանդ հանձնել այս ինչ գույքը: Ընկերության խորհուրդը գույքի տիրոջ հետ միասին գնահատում և տվյալ գույքը և գնահատությունը ներկայացնում և ընդհանուր ժողովին ի հաստատություն: Յերբ ընդհանուր ժողովը գնահատությունը հաստատում է, գույքի արժեքը գնահատված չափով գրվում և տիրոջ հաշվին իբրև ավանդ, և այդ գումարի համար տրվում են տոկոսներ:

Ավանդը պետք է վերադարձվի տիրոջը նրա առաջին իսկ պահանջի դեպքում, ընդ վորում տերն ավանդը ներկայացնելու ժամանակ կարող է պայմանավորվել, թե ինչ ձևով ավանդը պետք է յետ ստանա՝ դրամով, թե՛ ինչ վոր ներկայացրել եր (ձի, մեքենա):

Ընդհանուր միջոցների կազմակերպման յերրորդ ճանապարհն ընկերության ոգուտներից հատկացումն են: Հավաքված բերքը հաշվի չե առնվում. մի մասը գնում և ընկերության ընդհանուր ծախսերը ծածկելու համար (տրակտորի և տրակտորիստի պահելը և այլն), մի մասը հատկացվում և ընկերության պահեստի դրամազւիին, վորի միջոցներն ընկերությունից մի վորևե անդամի դուրս գալու ժամանակ անդամին չեն վերադարձվում: Այս ձեռնտու յե աջն տեսակետից, վոր շահազրգուում և ամեն մի անդամի ընկերության մեջ ֆնալու և այս կերպ ապահովում և ընկերությունն անցողարձի վայր դառնալուց, և նմանապես այն բանի համար, վոր ավելանում և ընկերության աշխատանքների հիմքը՝ հասարակայնացրած դրամազուիւր: Պահեստի դրամազուիւ կազմելու համար սուծանքների չափը վորոշվում և ընկերության

անդամները ընդհանուր ժողովում: Յեթե ընդհանուր ժողովը չի ցանկաւ ունենալ պահեստի կապիտալ, այնուամենայնիվ ընկերութիւն հասարակայնացրած միջոցների ուժեղացման համար ոգուտներէջ հատկացումներ պետք ե կատարվեն: Այս դեպքում հատկացումներն ավելացվում են փաշավճարային դրամադրին, այս կերպ մեծացնելով ամեն մի անդամի փաշը, վորը, ինչպես վերևում ասացինք, անդամին ընկերութունից դուրս գնալու դեպքում վերադարձվում ե:

Յեվ վերջապես՝ ընկերութւն ընդհանուր միջոցների կազմակերպման չորրորդ ճանապարհը պետական վարկավորումն ե: Պետական վարկով կարող ե ոգավել ամեն մի կոլտնտեսութուն, յեթե նա պատշաճապես ձևակերպված ե, այսինքն՝ յեթե նրա կանոնադրութւնը ցուցակադրված ե շրջանային (կամ գալիսոյին) հողային վարչութւն մեջ:

Հողի հասարակական մշակման ընկերութւն տնտեսութւն կազմակերպումը պահանջում ե վորձաութուն: Տնտեսութւնը, ըստ տարածութւն, խոշոր ե, սովորաբար ունի մեքենաներ ե հնարավորութւն ե տալիս մտցնելու հողապորճական հիմնական բարելավումներ: Ուստի ե անհրաժեշտ ե, վոր հողի հասարակական մշակման նոր կազմակերպված ընկերութւնը նախ ե առաջ կապ հաստատի վրոյատընտեսի հետ: Գլուղատնտեսը պարտավոր ե ընկերութւն համար կազմել կազմակերպչական ե արտադրական ծրագրեր, վորտեղ պետք ե նախատեսվի ընկերութւն տնտեսութւն կազմակերպումը:

Անհրաժեշտ ե նմանապես ունենալ հաշվետար, վորին կարելի յե հրավիրել դրսից, ե կամ ավելի լավ

և ընկերութեան անդամներէից վորեւ մեկին ուղարկել հաշվապահական դասընթացներ: Դժբախտաբար, հաճախ են պատահում դեպքեր, վոր կողմնտեսութեան անդամները լուրջ չեն վերաբերվում իրենց տնտեսութեան մեջ հաշվապահութեան սահմանելու հարցին, վոր նման դեպքերում միշտ շատ վատ է վերջանում: Անդամների մեջ յեղած հաշիվները խառնվում են, անդամները չեն իմանում՝ ողուտ թե ֆլատ են ստացել իրենց աշխատանքից, բանը վերջանում և վեճերով, անբավականութեաններով և հաճախ ընկերութեան քայքայումով:

Փյուղաջոճեցական արեւ: Կողմնտեսութեան յերկրորդ աստիճանը գյուղատնտեսական արտիկն է: Այն, վոր հողի հասարակական մշակման ընկերութեանը, վորտեղ հասարակացումը միայն դաշտագործութեանն է վերաբերում, ողուտներ ե տալիս, ակամա հարկադրում է մեղ մտածել տնտեսութեան ալլ ճշուդերի ևս հասարակացնադման ձեռնտու լինելու մասին:

Վերջինք, դիցուք, հողի հասարակական մշակման ընկերութեանը, Հողը մի տեղում է գտնվում, մշակումը կատարվում է ընդհանուր ուժերով: Նշանակում է, վոր հողի հասարակական մշակման ընկերութեան մեջ մեր գյուղացիական տնտեսութեանների ահագին թվի հիմնական աշխատանքն արդեն տմեն մի առանձին տնտեսութեան հոգսը չի հանդիսանում: Հասկանալի չե, վոր ընկերութեան անդամները պետք է մտածեն, թե ինչ է լինելու աշխատող անասունների բանը: Ետրաջանչյուր տնտեսութեան համար աշխատող անասունն արդեն անհրաժեշտութեան չի: Միև-



նուէն ժամանակ վորոշ քանակութեամբ աշխատող անասուններ հարկավոր են: Նույնիսկ լեթե ընկերութիւնը տրակտոր եւ ունենա, այսուամենայնիւ մի շարք աշխատանքներում ձին անհրաժեշտ է: Միտք չունի, որինակ՝ տրակտորով քաղաք դնալ գնումներ անելու. տրակտորի համար ավելի կարեւոր աշխատանք կա: Բայց քանի վոր այդպէս է, քանի վոր ձիու վրա ընկնում եւ աշխատանքի միայն վորոշ մասը, ուստի ընկերութիւնը կարող եւ յերկու-չերեք ձիով բավարարի: Յեւ, իհարկեւ, ավելի ձեռնտու յե այդ ձիերն ընդհանուր ոգտագործման մեջ լինեն: Առանձին տընտեսութեան համար միտք չունի ձի պահել, վորն ընդհանուրի կարիքներն ե հոգալու: Սկսվում են անխուսափելի վեճեր, կռիւներ, անհամաձայնութիւններ, վորոնք վերջիվերջո կարող են քայքայել ընկերութիւնը: Յեւ այս վեճերից խուսափելու համար լավ ե այդ յերկու-չերեք ձին դարձնել ընկերութեան սեփականութիւն:

Նույն կերպ դրված ե կաթնատու անասունների խնդիրը: Հողի հասարակական մշակման ընկերութիւնը հողերը միացնելուց հետո անցնում ե քաղմաղաշտչան սիստեմի: Յեւաղաշտչան սիստեմով հնարավոր չե տնտեսութիւնը դնել լավ հիմունքների վրա: Իսկ լեթե էլ լինի քաղմաղաշտչան սիստեմ, ուրեմն կլինի խոտ ե արմատապտուղ: Սկզբում այդ խոտը ե արմատապտուղը քաժանվում ե ըստ տնտեսութիւնների, ե դրանով կերակրվում են ընկերութեան անդամների անհատական ոգտագործման մեջ դառնող անասունները: Բայց լավ հիմունքների վրա դրված տնտեսութեան մեջ կոմի իր տերերին միայն կերակրողը չե, այլ ծա-



խու կաթնամթերք ել և տալիս Այս բանի համար կովին լավ խնամք և հարկավոր: Ընկերութեանը ձեռնտու յե կառուցել մեկ ընդհանուր տաքացրած գոմ (առանձին մանր գոմեր կառուցելը ձեռնտու չէ), փութադրել այնտեղ բոլոր կովերին, նշանակել ընկերութեան անդամներից անասնապահներ և հետագայում բաժանել ըստ տնտեսութեանների վոչ թի խառն ու արմատապտուղը, այլ և կաթնատնտեսական անասնապահութեան հասուցթը:

Ընկերութեան անդամներից մեկն ընդհանուրի հաշվին ուղարկվում և քաղաք կաթնատնտեսական կուրսերում սովորելու համար. այնտեղ նա գյուղատնտեսական գիտութեան բոլոր հիմունքներով սովորում և անասուններին խնամել և վերադառնում ընկերութեան արդեն մասնագիտական պաշարով, գեկավարում ընկերութեան անասնապահութեանը, ոգտվելով միևնույն ժամանակ գյուղատնտեսի խորհուրդներին:

Միջոցներ հավաքելով՝ կազմակերպում են պանրի, յուղի գործարան, և կովերը միայն իրենց տերերին կերակրելուց զատ, դառնում են կոլտնտեսութեան համար յեկամտի լուրջ աղբյուր:

Ուրեմն հողի հասարակական մշակման ընկերութեանը վեր և ածվում գյուղատնտեսական արտելի, վորտեղ ընդհանուր ոգտագործման են յինթարկվում հողը, մեքենաները, գործիքները, անասունը, տնտեսական շինութեանները:

Մովորաբար արտելի շուրջն առաջ են դալիս դանադտն ձեռնարկումներ: Զրադաց, աղունի, ձավարի գործանոց, սղոցարան, կոշիկների ուրհեստանոց, դարբ-

նոց, — այս բոլորը հաճախ արտելում գոյութիւն ունեն և սպասարկում են վոչ միայն արտելի անդամներին կարիքները, այլև աշխատում են կողմնակի մարդկանց համար՝ արտելին ուղղակի լեկամութենք բերելով:

Արտելին ծանոթանալիս աչքի չե ընկնում հետեւալը. մինչդեռ գյուղացիական անհատական տնտեսութեան մեջ գյուղացին պետք և իմանա ամեն ինչ, այսպես ասած՝ մասնագետ լինի ամեն ինչի, մինչդեռ հողի հասարակական մշակման ընկերութեան մեջ լեւան են դալիս առանձին մասնագետներ (տրակտորիստ, հաշվետար), արտելում արդեն շատ պատկառելի մասնագիտացում և նկատվում: Միջակ կարգի արտելներում սովորաբար կան այսպիսի մասնագետներ. — տրակտորիստ, հաշվետար, դարբին, կոշիկակար, չուղագործ, անասնապահ: Արտելի ֆիացած անդամները նույնպես մասնագիտանում են՝ վոմանք անասնապահութեան, ալգեգործութեան, մեղվաբուծութեան մեջ: Այսպիսի մասնագիտացումը գործին անկասկած ոգուտ և բերում: Մարդիկ հայտնաբերում են իրենց հանձնարարված գործի կատարման վորոշ հրմտութիւն, վորից, իհարկե, գործը շահում ե:

Արտելում ալելի ուժեղ կերպով, քան հողի հասարակական մշակման ընկերութեան մեջ, և, իհարկե, ալելի, քան անհատական տնտեսութեան մեջ առաջ և դալիս գյուղատնտեսի հետ կապ ստեղծելու պահանջը: Արտելի տնտեսութիւնը բարդ և, արտելի համար կազմակերպչական և արտադրական ծրագրերը կարող և կաղմել միայն գյուղատնտեսը:

Գյուղատնտեսի հետ սերտ կապ պահպանելով և

ներառաւ թիւ 1-ը, որով զուգահեռ իրենց տնտեսութեան  
գիտութեան բոլոր նվաճումներն իրենց տնտեսութեան  
մեջ, արտելի անդամները կարող են հասնել մեծ հա-  
ջողութեաններու:

Ահա, որինակ, գյուղատնտեսական արտել «Զեր-  
նո»-ն, վորն աշխատում է Կուրանի շրջանի Կանսկի  
ռայոնում: Կազմակերպվեց նա 1923 թ. յերեք չքավոր  
և յերեք միջակ տնտեսութեաններէ: Արտելը կազ-  
մակերպման ժամանակ ունի 3517 ո. դրամագումար:  
1927 թ. արտելն արդեն ունի 16000 ո. դրամագումար,  
ունի «Ֆորդզոն» տրակտոր, դերձանոց, դարբնոց և  
կոշիկ արհեստանոց: Շնորհիւ տնտեսութեան կու-  
տուրական ղեկավարութեան, յերկրագործութեան յի-  
կամուտը բարձրացաւ 100%-ով, անասնապահութեան  
յեկամուտը՝ 75%-ով:

Յեւ կամ մի ուրիշ որինակ: 1921 թ. Յարոսլավի  
նահանգի Վոլոդարսկի գավառում ութ կիւն կապալով  
վերցրին մի խրճիթ և բաց արին կարի արհեստանոց:  
Արտելային աշխատանքը դուր յեկավ. հողամաս ստա-  
ցան, լայնացրին գործը: Այժմ արտելը բաղկացած է  
77 անդամներից, ունեն՝ աղյուսի, կաշվի, դաթռանի  
գործարաններ, կոշիկ և կարի արհեստանոցներ: 26  
հեկտար վարելահողի վրա արտելը քառադաշտյան ցան-  
քասիւտեմ ունի, լավ մշակում է հողը և ստանում է  
միջին գյուղացիականից ավելի բարձր բերք: Արտելում  
միայն կանալ են, բայց տնտեսութեանը կարողանում  
են վարել հաջող, չղիմիւով վարձու աշխատանքի: Ար-  
տելի գոյութեան ընթացքում նրանց գուլքը բազմա-  
պատկեց չորս և կես անգամ: Սեփական դրամագումար  
նույն ժամանակվա ընթացքում հասաւ 15000 ո.:



Ինչպես հողի հասարակական մշակման ընկերութ-  
յան, այնպես եւ արտելի միջոցները կազմվում են  
մուտքի և փայտվճարներից, ոգուտներից մաս հանե-  
լուց և պետական վարկավորման միջոցներից: Բայց  
համեմատելով արտելը հողի հասարակական մշակման  
ընկերության հետ, պետք է ասել, վոր արտելում ո-  
գուտներից հատկացումների խնդիրն ստանում է ա-  
ռանձնապես կարևոր նշանակություն: Արտելի տնտե-  
սությունը մեծ է և բազմակողմանի: Նրա պահանջ-  
ները նույնպես մեծ են, շատ են, մանավանդ յեթե  
արտելի անդամները ցանկանում են լայնացնել և բա-  
րելավել տնտեսությունը: Վե՛ր մի բանի պետք չի այն  
արտելը, վորը կաշխատի վորքան կարելի չե քիչ հատ-  
կացնել ոգուտներից արտելի դրամադուլաներին (պա-  
հեստի և փայտվճարալին): Նման արտելի տնտեսու-  
թյունն անխուսափելիորեն կընկնի, չի զարգանա,  
և այդ բանը շատ շուտով կնկատեն իրենք արտելի  
անդամները: Կրկնում ենք, այդ խնդիրն արտելում  
առանձնապես կարևոր է: Արտելում համարյա վորջ  
տնտեսությունն ընդհանուր է, և այն միջոցները, վո-  
րոնք բաժանվում են ըստ տնտեսությունների, այդ  
առորյա սպառման միջոցներն են: Իհարկե, արտելի  
անդամների սպառման կարիքները պետք է բավա-  
րարվեն. արտելի անդամն արտելում պետք է ապրի  
լավ, քան տառնձին ապրելու դեպքում, բայց այն,  
ինչ հնարավոր է, անհրաժեշտ է ուղղել արտելալին  
տնտեսության զարգացման և ընդլայնման գործին:

Արտելի տնտեսությունը պետք է վարել նախո-  
րոք մշակված ծրագրի համաձայն: Ծրագիրը հարկա-  
վոր է նաև հողի հասարակական մշակման ընկերու-



թյանը, բայց արտելի համար նա ուղղակի անհրաժեշ-  
 տությունն է: Գոյությունն ունեն՝ կազմակերպչական-  
 տնտեսական և արտադրական ծրագրեր, կազմակերպչ-  
 չական տնտեսական ծրագիրը կազմվում է միջանի  
 տարիների համար, նախատեսվում է այն բոլոր ձեռ-  
 նարկումները, վորոնք արտելը պտտրաստվում է անց-  
 կացնել մոտակա տարիների ընթացքում իր տնտեսու-  
 թյան մեջ: Պարզ և, վոր այնպիսի ձեռնարկումներ,  
 ինչպիսին են՝ բաղմադաշտյան սիստեմի անցնելը, աս-  
 նասնապահությունը լավ հիմքերի վրա դնելը, վորեն  
 նոր կուլտուրա մտցնելը, արդյունաբերական ձեռնար-  
 կությունների կազմակերպումը, այդ բոլորը հնարա-  
 վոր չեն անցկացնել մեկ անգամից մեկ տարվա ըն-  
 թացքում: Այդ իսկ պատճառով, նկատի ունենալով ար-  
 տելի կանխիկ միջոցները, կազմվում է կազմակերպչա-  
 կան-արտադրական ծրագիրը, վորտեղ սահմանվում են  
 նշված բոլոր ձեռնարկումների անցկացման հերթերը:  
 Վորպեսզի ծրագիրը թղթի վրա չմնա, վորպեսզի աշ-  
 խատանքը հարմարվի տվյալ ծրագրի կատարման խնդ-  
 րին, լուրաքանչյուր տարի կազմվում է արտադրական  
 ծրագիր, վորտեղ նախատեսվում են կազմակերպչա-  
 կան-արտադրական ծրագրի իրականացման համար ան-  
 հրաժեշտ մեկ տարվա աշխատանքները: Վերցնենք  
 այսպիսի մի որինակ: Ասենք՝ դպրոցը ? տարվա ըն-  
 թացքում աշակերտին տալիս է վորոշ գիտելիքներ:  
 Դպրոցում անցնում են շատ գիտություններ, վոր մեկ  
 տարում անցնել հնարավոր չէ: Այդ գիտությունները  
 պետք է անցնել աստիճանաբար և վորոշ հերթակա-  
 նությամբ: Ձի կարելի, որինակ՝ աշակերտին ստի-  
 պել սովորելու աշխարհագրություն, չերբ նա դեռ չի ի-

մանում գրել-կարդալ: Յեկահա, զպրոցն ունի 7 տար-  
վա ծրագիր և բացի այդ՝ ամեն տարվա և ամեն որվա  
համար առանձին: Այսպես և նաև արտելային տնտե-  
սության մեջ: Յուրաքանչյուր տարվա արտադրական  
ծրագիրն անհրաժեշտ ենրա համար, վորպեսզի տարեց-  
տարի իրականացվի կադմակերպչական-արտադրական  
մեծ ծրագիրը:

Յերկու ծրագրերի մշակումն ել պետք և կատար-  
վի գյուղատնտեսի միջոցով, վորից հետո ծրագիրը հաս-  
տատովում և արտելի անդամների ընդհանուր ժողովում:

Գյուղացեացեալեաց Կոմմունայ, Կոլտնտեսու-  
թյունների ամենաբարձր ձևը գյուղատնտեսական կոմ-  
մունան և: Արտելից նա տարբերվում և նրանով, վոր  
նրանում անհատական տնտեսությունները բոլորովին  
չքանում են:

Այնտեղ ղոչ միայն արտադրությունը, այլև սպա-  
ռումն արդեն հասարակացնացված և: Արտելում ընդ-  
հանուր շահերը հանգում են տնտեսությունը ղեկավա-  
րելուն և նրանից յեկամուտ ստանալուն, վորը հետա-  
գայում բաժանվում և անդամների մեջ: Կոմմունայում  
ընդհանուր հոգատարություն կա թե՛ սննդի, թե՛ հա-  
զուստի, թե՛ չերեխաներին խնամելու և թե՛ անդամ-  
ների կուլտուրական հանգստի կադմակերպման մասին:  
Արտելում յուրաքանչյուր ընտանիք սնվում և առանձին.  
յեթե արտելում 20 ընտանիք և, Եւրեմն, 20 հոգի ա-  
մեն որ պետք և զբաղված լինեն մնացածների համար  
կերակուր պատրաստելով և մասնակցել տնտեսության  
աշխատանքներին ինչպես հարկն և՛ չեն կարող: Յեկ  
քանի վոր տանը, բացի ճաշ պատրաստելուց, ուրիշ  
աշխատանքներ ել չատ կան (կարել, լվանալ, չերե-

խաներին խնամել), — այդ բոլորը կատարվում է շտապ կերպով և վոչ՝ ինչպես հարկավոր եւ Կոմմունայում խոհանոցն ընդհանուր եւ, խոհանոցում աշխատում են հատկապես այդ գործի համար առանձնացրած կոմմունայի անդամները: Արդյունքն այն է լինում, վոր նախ և առաջ բանվորական ուժն է տնտեսվում, սնունդ պատրաստելով զբաղված են ավելի քիչ մարդիկ, չերկրորդ՝ կերակուրն ավելի լավ վորակի յե լինում, յերրորդ՝ Թափթփուկները մեծ ոգուտով կարելի յե ոգտագործել կոմմունայի խոզերի կերակրման համար:

Կոմմունայում յերեխաներին խնամելու գործն ել է կազմակերպվում: Որինակ՝ Նոր Սիրիբի չիջանի «Կարմիր Հոկտեմբեր» կոմմունայում ամենալավ տղանը հատկացված է յերեխաներին: Յերկրորդ հարկում գտնվում է մանկական մսուրը, իսկ առաջին հարկում՝ մանկական հրապարակը: Առավոտյան ժամը 5-ին մայրերը բերում են իրենց յերեխաներին մսուր և իրենք գնում են աշխատանքի: Մսուրում յերեխաներին կերակրում են, խնամում, քնացնում առբաժնից ստացված մաքուր մահճակալներում: Մանկական հրապարակ են հաճախում ավելի մեծ յերեխաները, վորոնք ամբողջ որն այնտեղ են մնում, և նրանց դաստիարակում է հատկապես Մոսկվոյի համալսարանից հրավիրված ուսուցչուհին:

Այժմս կոմմունան մտադիր է մանկական հրապարակը վերածել մանկական տան, վորտեղ յերեխաները կմնան վոչ միայն ցերեկը, ինչպես հրապարակում, այլ և գիշերը. Թե՛ յերեխաների խնամքն է լավ հիմքերի վրա դրված, և Թե՛ մայրերն ողջատվում են տընտեսութւան մեջ ուրիշ աշխատանքներ կատարելուց:



Ինչպես տեսնում եք, մասնագիտացումը կոմ-  
մունայում տվելի չե հետուն ղնում, քան թե արտե-  
լում: Յերևան են գալիս նոր մասնագետներ՝ ուսուց-  
չուհի, խոհարար, վորպիսիք գոյութւոն չունեն ար-  
տելում:

Տան տնտեսությունը կոմմունայում կազմակերպ-  
վում և ըստըովին նոր ձևերով: Ընդհանուր տան կա-  
ռուցումը հնարավորութւոն և տալիս ստեղծելու մա-  
քուր և հարմար բնակարան: Տան մանր աշխատանք-  
ները նմանապես միացվում են, այնպես վոր արտեղ  
ել դարձյալ նկատվում և բանվորական ուժի տնտե-  
սում:

Աշխատանքի կանոնավոր կազմակերպումը, տնա-  
յին տնտեսութւան աշխատանքների տնտեսումը հնա-  
րավորութւոն են տալիս կոմմունային վորոշ ժամա-  
նակ հանգստի հատկացնել: Իսկ յերբ կա հանգստի հա-  
մար վորոշ ժամանակ, հնարավոր և լինում կազմա-  
կերպել այդ հանգիստը: Ընդհանուր ակումբը, զրադա-  
րան-ընթերցարանով, ռադիո և զանազան խմբակնե-  
րով, կոմմունարների համար կուլտուրական հանգստա-  
վայր և:

Իր աշխատանքների համար միջոցներ կոմմու-  
նան վերցնում և նույն աղբյուրից, վորտեղից վերցը-  
նում և հողի հասարակական մշակման ընկերութւոնը  
և արտելը:

Բայց կոլտնտեսութւոնների այդ յերկու ձևից  
կոմմունան տարբերվում և նրանով, վոր ԽՍՀՄ-ում  
կոմմունայում պարտադիր են: Գյուղացու գույքը, կոմ-  
մունա մտնելիս, կոմմունայի խորհուրդը գնահատում և  
նրա մասնակցութւամբ (իսկ հետագայում այս գնահա-



տումը հաստատվում է կոմմունայի անդամների ընդհանուր ժողովում): Գույքի մի մասը հաշվվում է մուտքի վճարի դիմաց, իսկ մի մասն էլ՝ փայավճարի դիմաց: Մնացածն ընդունվում է իբրև ավանդ, և ընդհանուր ժողովի կողմից հաստատված չափով վճարվում են տուկոսներ: Յենթադրենք, թե կոմմունայի մեջ մտնողի գույքը գնահատված է 600 ու. կոմմունայում սահմանված է՝ 2 ուր. մուտքի վճար, 500 ու. փայավճար: Այս դեպքում նոր ընդունվողի գույքն այս կերպ է բաժանվում. 2 ու. կոմմունայի հիմնական դրամազրկին (դուրս գալու դեպքում այս գումարը չի վերադարձվում), 500 ուր. իբրև փայ, իսկ մնացած 98 ու. ընդունվում է իբրև ավանդ:

Գյուղացին կոմմունայից դուրս գալու դեպքում իր փայլը ավանդը, բոլոր տոկոսներով, չեւ է ստանում:

Կոմմունայի, ինչպես և արտելի տնտեսութունը տարվում է կադմակերպչական-տնտեսական և արտագրական ծրագրերի համաձայն:

Բերենք յերկու որինակ: Ռյազանի նահանգի Սկոպինսկի գավառի «Զարյա» կոմմունան, յերբ 1921 թ. կադմակերպվեց, իր 13 անդամի համար ունեւր՝ 1 ձի, 1 կով և 3 վոչխար: 1928 թ. արդեն նա ունի իր 150 անդամների համար 2 «Փորդզոն» տրակտոր, 1 «Զապորոժեց» (տրակտոր), 28 ձի, 25 կով, 60 վոչխար, 65 խոզ, կառուցում է ջրաղաց, ձեթհան, հացահատիկ մանրացնող և չորացնող 40 ձիու ուժանոց շարժիչով: Կոմմունայի հաշվեկշիռն այս ժամանակամիջոցում 50 ուրբլուց քարձրացավ 100,000 ու. (հարյուր հազար):

Կոստրոմայի նահանգի Զուխլումսկի գավառի

կարլ Մարքսի անվան կոմմունան յերբ 1919 թ. կազմակերպվեց, ունեւր միայն մի ձի, 2 կով: Առաջին տարիներում կոմմունարները մաքրում, չորացնում եյին անհարմար հողը, իսկ այժմս անցել են լոթաշտալին սիստեմի, ունենա՞ տրակտոր, սերմացան մեքենա, կալսող մեքենա, քամհար մեքենա: Կոմմունայում բերքը ավելի լավ է, քան թե անհատական տնտեսություններում: Արդեն 1925 թ. հաճարը ավեց մեկ հեկտարից 9 ցենտներ — գյուղացիական 7 ցենտների դիմաց, վարսակը՝ 12 — գյուղացիականի 10-ի դիմաց: Կոմմունան նմանապես ունի 5 կաթնատու կով (Յարոսլավյան), վորոնք տալիս են 14 — 22 ցենտներ կաթ, 3 հատ ձի, 8 ումանովյան ցեղի վոչխարներ և չորս ազնւլացեղ խոզ: Կառուցել են դանիական ձևով դոմ, բրնակելի շէնք, բաղանիք: Պետական վարկի հատուցումները կոմմունան մուծում է կանոնավոր կերպով:

### ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՅԵՂԱԾ ԿԱՊԸ

Խոսելով կոլտնտեսությունների դանազան տիպերի մասին՝ հողի հասարակական մշակման ընկերության, արտելի և կոմմունայի, խոսելով նաև արտագրական պարզագույն միավորումների մասին, մենք միշտ ընդգծել ենք նրանց միջև յեղած կապը և այն, վոր գյուղացիներն աստիճանաբար միավորումների պարզ ձևերից անցնում են ավելի բարդ ձևերին: Այնուամենայնիվ սրանից չի կարելի յեզրակացնել, վոր կոլտնտեսություն կազմակերպել ցանկացող գյուղացիները պետք է անպայման սկսեն մեքենատուգտագործական ընկերությունից և կոլտնտեսությունների նկա-

բագրված բոլոր տեսակներով աստիճանաբար անցնեն դեպի կոմմունան:

Մեկ հայտնի չեն բազմաթիվ դեպքեր, յերբ գյուղացիներն անմիջապես արտիկն կազմակերպել: Ճիշտ է, սկզբնական շրջանում այդ արտիկը հաճախ հանդիսացել է մեքենաօգտագործական կամ հողի հասարակական ոգտագործման ընկերություն և խակական արտել դարձել հետագայում, աստիճանաբար հասարակայնացնելով տնտեսությունը, բայց անմիջապես արտիկ անցնելը մի լավ կողմ ունի այն տեսակետից, վոր այս դեպքում անմիջապես դրվում է վորոշ նպատակ, վորի իրականացման համար հարմարեցվում է կոլլեկտիվի ամբողջ աշխատանքը:

Բայց պետք է ինկատի ունենալ, վոր հետևողականությունը և զգուշությունը շատ անհրաժեշտ են կոլլեկտիվի կազմակերպման գործում: Անհատական տնտեսությունից անմիջապես կոմմունայի անցնել, իհարկե, կարելի չէ, բայց այսպիսի ուժեղ փոփոխություն ամենքն էլ չեն կարող տանել: Լավ գործը կարող է տուժել ավելորդ կրակոտությունից: Մի բան չըպետք է մոռանալ. ամեն մի նորություն, ամեն մի նոր հասարակայնացում, տնտեսության կոլլեկտիվացրած մասի ամեն մի լայնացում պետք է մտցնել նախորդ ընդհանուր ժողովում այդ մասին խորհրդակցելուց հետո, յերբ կոլտնտեսության անդամներն այդ նորության կարևորությունը կըմբռնեն և կհամաձայնվեն մտցնելուն:

Միավորումը միշտ էլ ոգտակար է, տնտեսության վոր ճյուղին էլ վերաբերելու լինի, մանավանդ, չեթե հողն արդեն հասարակայնացված է. միայն անհրաժեշտ



և, վորպեսզի այս միավորման գործին կոլտնտեսության տնդաւմները գնան գիտակցորհն և հասկանան, թե ինչն և այդ միավորման ելությունը:

### ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՒՏՆՏԵ- ՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Կոլտնտեսություններում ամենակարեւոր խնդիրն աշխատանքի վարձատրության հարցն է, այսինքն, ալլ կերպ ասած, կոլտնտեսությունների յեկամուտների բաշխման խնդիրը: Կոլտնտեսության ամեն մի տեսակում այս խնդիրն ունի իր դժվարությունները: Քրննենք այս դործն ավելի մանրամասն: Սկսենք հողի հարաբարակական մշակման ընկերությունից: Արդեն գոյություն ունեցող ընկերությունների փորձը ցույց է տալիս, վոր այնտեղ կիրառվում են աշխատանքի վարձատրության հինգ հիմնական յեղանակ:

Պաւաքից յեղաւակ. հավաքված բերքը բաժանվում է ըստ շնչերի: Վոչ աշխատանքի սպառումը, վոչ կենդանի և մեռած ինվենտարի աշխատանքն ինկատի չեն առնվում: Պարզապես ասած՝ այս ըստ հողալին տարածության բաշխում է, վորը, ինչպես հայտնի յեկախում ունի տնտեսության շնչերի թվից: Բացի այն, վոր այս յեղանակը միշտ տեղի չէ տալիս զանազան վեճերի, նա ձեռնառու չէ և նրա համար, վոր ընկերության մեջ առաջ է բերում աշխատանքի արտագորդականության նվազում: Վեչվոք չի ուզում առանձնապես աշխատել, իթե գիտի, վոր ինչքան ել վոր աշխատի, միևնույն է, ուրիշներից, մինչև իսկ անաշխատունակներից ավելի չի ստանա:

Յեւկրոդ յեղաւակ. բաժանում են ըստ անտեսությունների: Ամեն մի տնտեսություն ներկայացնում



ե ըստ հնարավորութեան հավասար քանակութեամբ բանվորական ուժ և բերքը հավասարապես բաժանվում ե ըստ տնտեսութեանների: Այս լեղանակը քիչ կիրառելի յե, վորո՞վհետև դժվար ե ախալես անել, վոր ամեն մի տնտեսութեան հավասար քանակութեամբ բանվորական ուժ ներկայացնի: Միշտ աշխատող ձեռքերը կամ կպակասեն և կամ կավելանան:

Յերրորդ յեղաճակ. ամեն տեսակի աշխատանքներում (վար, հունձ, հացահավաք) ամեն մի տնտեսութեան տրվում ե աշխատանքի համար «դաս», վոր պետք ե համապատասխանի տվյալ տնտեսութեանը պատկանող հողամասի չափին: Բերքը հավաքվում ե մի տեղ և քաշից հետո բաժանվում ե տնտեսութեանների միջև ըստ նրանց պատկանած հողամասերի: Այս յեղանակը մոտ ե առաջինին և նույն պատճառներով ել ձեռնառու չի:

Յորրորդ յեղաճակ. հողի մի վորոշ տարածութեան, այդ հողի համար անհրաժեշտ մարդկային, բանող անասունի ուժի հետ միասին, ընկերութեան մեջ համարվում ե փայ: Ամեն մի ընտանիք, նայած թե ինչ կարողութեան տեր ե, ներկայացնում ե մեկ, յերկու, յերեք փայ: Բաժանումը կատարվում ե ըստ այդ փայերի: Այս յեղանակն արդեն միանգամայն ձեռնառու չե, քանի վոր, վորքան տնտեսութեանը ուժեղ ե և հարուստ, այնքան ել շատ ե ստանում:

Ճիւղերորդ յեղաճակ. բաժանում են ըստ գործադրած աշխատանքի քանակի: Ընկերութեան անդամների ընդհանուր ժողովում հաստատվում ե հասակավոր և անչափահաս բանվորի որավարձը: Աշխատանքի ամբողջ ընթացքում հաշվի չե տնվում, թե տնտե-

սուխիւնը քանի բանվորական ուր և ներկայացրել,  
և բաժանման դեպքում ամեն մի տնտեսուխիւն ստա-  
նում ե վորոշված նորմայով աշխատավարձ: Մնացած  
բերքը գոտոյ յեկամուտն ե ու բաժանվում ե ըստ ա-  
մեն մի տնտեսուխիւնը պատկանող հողի քանակի:  
Այս ամենահարմար և արդար յեղանակն ե:

Արտելում աշխատանքի վարձատրութեան խըն-  
դիրն ավելի պարզ կերպով ե դրված, քան հողի հա-  
սարակական մշակման ընկերութեան մեջ, վորովհետե  
արտելում տնտեսութեան բոլոր կամ համարյա  
թե բոլոր ճյուղերը հասարակայնացված են: Սովո-  
րաբար աշխատեա ե կատարվում, վոր արտելի ան-  
դամների ընդհանուր ժողովում վորոշվում ե արտելի  
ամեն մի անդամի աշխատավարձի չափը համաձայն  
աշխատանքի, վոր նա կատարում ե: Այս աշխա-  
տավարձը նա ստանում ե վորոշ ժամկետներում և  
աղբ միջոցներով ել ապրում ե: Հաշվետու տարին վեր-  
ջանալուց հետո կազմվում ե հաշվեկշիռ, և պարզվում  
ե արտելի մաքուր ոգուտը, վորը և բաժանվում ե  
աշխատեա, վոր մի մասը հատկացվում ե պահեստի  
դրամագլխին, մյուս մասը՝ անդամների փոյազվճարա-  
յին դրամագլխներին: Վերջին գումարի մի վորոշ  
մասը, ընդհանուր ժողովի վորոշմամբ, կարելի յե բա-  
ժանել անդամների միջև:

Կոմմունաներում աշխատավարձի խնդիրը հիմնա-  
կանում դրված ե աշխատեա, ինչպես և արտելներում:  
Միայն թե կոմմունաներում ոգուտի վորոշ մասը  
գնում ե կոմմունայի անաշխատունակ անդամների  
ապրուստին:

Նոյն յերևույթը նկատվում ե նաև արտելում,

բայց ամէլի հաղվադեպ, վերսկսեալ արտելի անդամ-  
ները սնովում, հազնովում են իրենց առանձին ընտա-  
նիքներով, մի բան, վերը կոմմունալում չկա, և ամբողջ  
ընտանիքն ոգտովում և ընտանիքի անդամ աշխատավոր-  
ների վաստակածով: Մի շարք կոմմունաներում սահ-  
մանովում և նաև բաշխում «ըստ պահանջների», այս-  
ինքն, ընտանիքին տրվում և այնքան, վերջան նրան  
անհրաժեշտ և ունենալ: Բայց այս կարգը շատ թույլ  
և գործադրվում: Նախ և առաջ՝ գոյութուն ունեցող  
կոմմունաները դեռ այնքան ել ուժեղացել չեն, վոր-  
պեսզի իրոք բավարարեն անդամների բոլոր պահանջ-  
ները, չերկրորդ, այս կերպ հաճախ ընկնում և աշխա-  
տանքի արտադրողականութունը:

\*\*\*\*\*

### III. ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՐՆԵՐԸ ՅԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կոլլեկտիվացումն ամեն մարդու յեւ դուր չի գալիս: Այն ժամանակ, յերբ չքավորի համար կոլլեկտիվացումը չքավորութիւնից դուրս գալու միակ ճանապարհն է, այն ժամանակ, յերբ միջակի համար կոլլեկտիվացումը տնտեսութեան ըարձրացման ամենալավ միջոցն է և ազատում է բերքից մշակաւն կախման մեջ պահելուց, կուլակի համար կոլլեկտիվացումը նրա բարեկենցութեանն սպառնացող վտանգ է: Աշխատող չքավորի հաշիւն ապրող կուլակը մոչ մի քավակնութիւն չի ստանում նրանից, վոր չքավորը կոլլեկտիվացման ճանապարհով ազատադրվում է կուլակի ստրուկ լինելուց:

Այս իսկ պատճառով չքավորութիւնը կոլլեկտիվներից խրտնացնելում շահագրգռված կուլակը կոլլեկտիվների մասին ամեն տեսակի բամբասանքներ է տարածում:

Ամենից շատ նա սիրում է խոսել այն մասին, վոր, իբր, գլուղացին կոլլեկտիվում կորցնում է իր իրավունքները և բատրակ է դառնում:

Քանի վոր կան դեռ չքավորներ, վորոնք դեռ չեն ճաշակել կուլակի ամենասիրած միջոցը—չքավորութեան բարեկամ հանդիսանալով նրան հանկարծա-



կի անեխանելի դրուժյան մեջ գցել,—մենք այսպեղ մանրամասն քննենք, թե ինչու՞մն են կաշանում կոլտնտեսութեան անդամներ իրավունքները և պարտականութիւնները:

Բայլ չնիկ կոմմունիստների կուսակցութիւնը, վորը գյուղում տարած իր քաղաքականութեամբ հենվում է գյուղի չքավորութեան վրա, ամուր դաշինք է պահպանում միջակի հետ կուլակի դեմ, և խորհրդային իշխանութիւնը, վորի ներկայացուցիչներն թվում քիչ չեն չքավոր-միջակ գյուղացիները, շատ լավ հասկանում են, վոր գյուղատնտեսութեան մեջ աչն հեղաշրջումը, վորն առաջ է բերում կոլլեկտիվացումը, հնարավոր է միայն գյուղի միջակ և չքավոր մասսաների լայն ու կամավոր մասնակցութեամբ: Վլադիմիր Իլիչ Լենինը կուսակցութեան VIII համագումարում ասում եր. «Ամհնամեծ հիմարութիւնը կլիներ, չեթե մենք մտածենք միջակ գյուղացու տնտեսական հարաբերութիւնների աստարիզում վորեւ ըռնութիւն գործ դնել: Խնդիրն այստեղ նրանումն է, վոր անհրաժեշտ է հաշվի առնել գյուղացու կյանքի առանձնահատուկ պայմանները, պետք է գյուղացիներից սովորել կյանքի ավելի լավ ձևի անցնել և չհամարձակվիլ հրամայել»:

Միանգամայն պարզ է, վոր կոլտնտեսութիւնների կառուցման խնդիրը վռչվոք չի կարող լուծել, բացի չքավոր և միջակ գյուղացիութիւններից՝ կոմմունիստական կուսակցութեան ղեկավարութեամբ և խորհրդային իշխանութեան բոլոր մարմինների ոգնութեամբ:

Կոլտնտեսութիւնը կարող է կազմակերպվել միայն նրա մեջ մտնող գյուղացիների կամավոր ցան-

կուլթյամբ: Կոլտնտեսութեան ձևը (ընկերութիւն, արտեր, կոմմունա) վորոշվում է կոլտնտեսութեան անդամների ընդհանուր ժողովի ցանկութեամբ: Վոչվոր, վոչ կուսակցական և վոչ խորհրդային կամ վորեն ալ մարմին, չի կարող ստիպել գլուղացիներին ընդունելու կոլտնտեսութեաննրի ալս կամ ալն ձևը, նմանապես իրավունք չունի ստիպելու կոլտնտեսութեան անդամներին կոլտնտեսութեան կազմի մեջ ընդունել կամ հեռացնել վորեն մեկին: (Բացի առևտրականներէց, վորոնք, համաձայն որենքի, իրավունք չունեն մտնելու կոլտնտեսութեան մեջ):

Ամեն մի կոլտնտեսութեան ղեկավարվում է իր անդամների ընդհանուր ժողովով: Ընդհանուր ժողովի ընտրած կոլտնտեսութեան խորհուրդը միայն կատարում է ընդհանուր ժողովի կամքը, ալսինքն հանդիսանում է վոչ թէ կարգադրող որդան, ալ՝ կատարող: Կոլտնտեսութեան խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի ընտրութիւնը կատարվում է կոլտնտեսութեան անդամների ընդհանուր ժողովում: Կոլտնտեսութեան խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի անդամ կարող է ընտրվել կոլտնտեսութեան ամեն մի անդամ, վորը 18 տարին անց է, և վորը իրավունք ունի ընտրվելու և ընտրելու բանվորների և գլուղացիների պատգամավորների խորհուրդ:

Կոլտնտեսութեան անդամ են համարվում կոլտնտեսութեանը կազմող ընտանիքներին պատկանող 16 և ավելի տարեկան քաղսքացիները: Անդամները հավասարապես փայավճար են մտցնում և ոգտվում են հավասար իրավունքով կոլտնտեսութեան ընդհանուր քողովներում: Առևտրական ձեռնարկութիւն ունեցող-

ները չեն կարող կոլտնտեսութեան անդամ լինել: Ձի կարելի միաժամանակ միքանի կոլտնտեսութեան անդամ լինել:

Յուրաքանչյուր վոք, վորը ցանկանում ե մտնել կոլտնտեսութեան մեջ, գրավոր դիմում ե տալիս այդ մասին և ստորագրութուն, վոր պարտավորվում ե կատարել կանոնադրությունը և ընդհանուր ժողովներ ղ վորոշումները: Անդամի ընդունելութունը կատարվում ե ընդհանուր ժողովի վորոշմամբ: Կոլտնտեսութեան մեջ ընդունվելիս անդամը պետք ե մուծի մուտքի ե փայտվճար:

Պարզագույն արտադրական միավորումներում ամեն մի անդամ մտցնում ե միայն մուտքի վճար, իսկ փայլը մտցվում ե ամբողջ տնտեսութեան համար:

Ընկերութեան ամեն մի անդամ պատասխանատու չե ընկերութեան պարտամուրհակներին, իրեն մուծած փայտվճարի գումարի սովորաբար տասնապատիկ չափով: Հափը վորոշվում ե ընդհանուր ժողովում և մտցրվում ե կանոնադրութեան մեջ): Յեթե փայլը 50 ո. յե, իսկ պատասխանատվութունը վորոշված ե տասնապատիկ չափով, այդ դեպքում անդամը կոլտնտեսութեան գործերի համար, յեթե, իհարկե, կոլտնտեսությունը փաստեր ե կրել և չի կարող պարտքերը հատուցել, պետք ե իր սեփական գույքից 500 ո. սահմաններում վճարի: Կոլտնտեսութեան անդամներն այս պատասխանատվութունն ունեն, իհարկե, կոլտնտեսութեան ընդհանուր պարտքերի համար:

Ընկերութեան ամեն մի անդամ իրավունք ունի մասնակցել ընկերութեան ընդհանուր ժողովներին վճռական ձայնի իրավունքով: Ընկերութեան ամեն մի



անդամ յերեցանկանա, կարող ե ընկերությունից դուրս  
գալ, ընկերությունից ստանալով յետ ստանալու պալ-  
մանով իր մուծած գույքը:

Կոլտնտեսության բոլոր գործերը վորոշում ե  
կոլտնտեսության անդամների ընդհանուր ժողովը:  
Կանոնադրության և ներքին կարգապահության կա-  
նոնների ընդունումը, նոր անդամների ընդունելու-  
թյունը և վտարումը, կազմակերպչական-տնտեսա-  
կան և արտադրական ծրագրերի հաստատումը, զանա-  
զան պայմանագրերի կնքումը, վարկ ստանալու հետ  
կապված բոլոր խնդիրները, մեքենաների և այլ ապ-  
րանքների վնումը, կոլտնտեսության արտադրանքնե-  
րի վաճառումը, նոր շենքերի և կոլտնտեսության  
կյանքի համար նշանակութուն ունեցող բոլոր խըն-  
դիրները վորոշում ե նրա անդամների ընդհանուր ժո-  
ղովը:

Բայց, իհարկե, չպետք ե մոռանալ, վոր կոլտն-  
տեսության ամեն մի անդամից պահանջվում ե վորոշ  
դիտցիայլինա: Կոլտնտեսության ամեն մի անդամ պար-  
տավոր ե առանց հակաճառության կատարել ընդհա-  
նուր ժողովի վորոշումները: Յեթե այս կերպ չլինի՝  
կոլտնտեսության մեջ համերաշխություն չի լինի, և  
ուրեմն աշխատանքներում նրանք հաջողություն չեն  
ունենա:



#### IV. ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՉՊԻՍՏ ՄԻԱՎՈՐՈՒՄ- ՆԵՐ ԵՆ ԼԻՆՈՒՄ, ԻՆՉՊԵՍ ՅԵՎ ԻՆՉ ԲԱՆԻ ՀԱՄԱՐ ՆՐԱՆՔ ՍՏԵՂԺՎՈՒՄ ԵՆ

Կոլտնտեսություններն առանձին, մեկը մյուսից կտրված չեն ապրում: Նրանք կապված են միմյանց հետ ընդհանուր շահերով, վոր ստիպում է ստեղծել կոլտնտեսությունների մի ամբողջ շարք միավորում-  
ների:

#### ԽՄԱԾ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Քննելով արտադրական պարզագույն միավորում-  
ների և կոլտնտեսությունների զանազան տեսակները,  
մենք ասացինք, վոր նրանք հնարավորություն են  
տալիս գյուղացիներին իրենց տնտեսության մեջ ող-  
տագործել մեքենան, և ուրեմն, ունենալ բարելավված  
ցանքսաշրջան և առհասարակ տնտեսությունը դնել  
գյուղատնտեսական դիտության պահանջների համա-  
ձայն: Բայց կան մի շարք ձեռնարկություններ, վոր վոչ  
միայն անհատական գյուղացիական տնտեսության,  
այլև առանձին կոլտնտեսության ուժից վեր են: Մեծ  
կոլտնտեսություն կազմակերպելն այնքան էլ հեշտ չէ:  
Կազմակերպչական-տնտեսական և արտադրական ծրա-  
գրերը կազմելու համար անհրաժեշտ է գյուղատնտե-

սի ոգնությունը: Շրջանային գլուղատնտեսը միշտ ել  
 չի կարող ժամանակ գտնել այդ աշխատանքը բոլոր  
 կոլտնտեսությունների համար կատարելու: Ուրեմն  
 անհրաժեշտ է գլուղատնտեսական ոգնություն փրնտ-  
 ոել տնտեսության շրջանից դուրս: Բացի այս՝ մեծ  
 կոմսունայի կամ բազմակողմանի տնտեսություն ու-  
 նեցող արտելի պահանջները, վորտեղ թե չերկրագոր-  
 ծությունը, թե անասնապահությունը, թե բանջարա-  
 բուծությունը և թե մեղվապահությունը մեծ նշանա-  
 կություն ունեն, միշտ չեն կարող սպասարկվել շրջա-  
 նային գլուղատնտեսի կողմից: Հարկավոր կլինի վոչ  
 թե միայն պարզապես գլուղատնտես, այլև գլուղական  
 տնտեսության զանազան ճյուղերի մասնագետ գլու-  
 դատնտեսներ: Միանգամայն պարզ է, վոր յերկու-  
 չերեք գլուղատնտես պահելը մեկ կոլտնտեսության  
 հաշվին անհնարին է և միտք ել չունի: Բայց մի քանի  
 իրար մոտ գտնվող կոլտնտեսություններ ընդհանուր  
 ուժերով այդ բանը պետք է տեսնու: Նրանք կնքում են  
 ընդհանուր պայմանագիր և կազմում են, այսպես  
 կոչված՝ կոլտնտեսությունների խմբած միավորում:  
 Քմբած միավորումների խնդիրը չի սահմանափակ-  
 վում նրանց ընդգրկած կոլտնտեսությունների գլուղա-  
 տնտեսական սպասարկման կազմակերպումով: Այն-  
 պիսի կարևոր աշխատանք, վորպիսին է կոլտնտեսու-  
 թյան հաշվապահության կազմակերպման խնդիրը  
 փորձառու և բավարար չափով զրադետ հաշվետար-  
 ների բացակայության դեպքում, ավելի հեշտ է լուծ-  
 վում, յեթե հաշվապահությունը կազմակերպվում է մի-  
 քանի կոլտնտեսությունների խմբած միավորումների  
 համար:

Յեւթ կամ վերցնենք այնպիսի մի հարց, վերաբեր-  
ւած է մեքենաների վերանորոգման արհեստանոցների  
կազմակերպումը: Կոլտնտեսութիւններում՝ մեքենա-  
ներ շատ կան, բոլոր ալդ մեքենաների համար պա-  
հանջվում է շնորհքով խնամք, վերանորոգում: Մեքե-  
նաները շարունակ քաղաք տանել վերանորոգելու  
համար դժվար է և թանգ կնստի: Գերադասելի յի  
հենց տեղում ունենալ մեքենաներ վերանորոգող ար-  
հեստանոց: Գյուղական դարբինը կարող է միայն ա-  
մենաշատարակ վերանորոգումներ անել: Բարդ մեքե-  
նաները կամ տրակտորը նա հանձն չի առնի վերա-  
նորոգել, իսկ յիթե անի չել, կտրող է փչացնել: Ան-  
հրաժեշտ է ունենալ մեքենաների վերանորոգման ար-  
հեստանոց, վորը սարքավորված լինի բարդ մեքենա-  
ներ (տրակտոր) վերանորոգող պարագաներով, բայց  
այդ մեկ կոլտնտեսութեան ուժերից վեր կլինի: Իսկ  
խմբած միավորումների կազմակերպման դեպքում  
հնարավոր է դուրս գալ այս անելանելի դրութիւնից:  
Մանավանդ, վոր նման դեպքերում պետութիւնն ոգ-  
նում է վարկով:

Այս կերպ է դրված հարցը նաև արտադրական  
ձեռնարկութիւններում: Կառուցել ջրաղաց-հողմաղաց՝  
մեծ հունալը չէ. կառուցել շոգեաղաց՝ դա շատ դժվար է,  
մի կոլտնտեսութեան համար մինակ ալդ դործը դուրս  
բերելը համարյա անհնարին է: Բայց չե՞ վոր շոգեաղա-  
ցի արտադրողականութիւնն ել այնպիսի յի, վոր նա  
կարող է սպասարկել վոչ միայն մեկ կոլտնտեսութեան:  
Ուստի և ջրաղացի և նմանապես ամեն տեսակի քա-  
վականին խոշոր ձեռնարկութեան կառուցումը ձեռնառու  
յի կազմակերպել խմբած միավորման միջոցով:



Այնուհետև դալիս են կոլտնտեսությունների  
կուլտուրական սպասարկման խնդիրները: Հեռանալով  
հասարակութունից և սովորաբար իրենց շենքերը փո-  
խադրելով հողամասերի վրա, կոլտնտեսական ան-  
դամներն անխուսափելիորեն հեռանում են կուլտու-  
րական հիմնարկներից, ինչպիսիք են՝ դպրոցը, հի-  
վանդանոցը, դրադարանը: Այս հիմնարկները կազմա-  
կերպել խմբած միավորումների ղեկավար ավելի հեշտ ե,  
քան թե ամեն մի առանձին կոլտնտեսական համար:

Ահա թե ինչպես ե գրված կոլտնտեսություննե-  
րի խմբած միավորումների խնդիրը: Իսկն ասած՝ դա  
կոլլեկտիվացման լրացուցիչ, ավելի բարձր աստիճան ե,  
վորտեղ ավելի խոշորանում և միացվում են կոլ-  
լեկտիվ տնտեսությունները: Խմբած միավորման շուրջն  
աստիճանաբար զանազան ձևերի կուլտնտեսների առաջ  
գալն, անխուսափելիորեն, նրանով ե վերջանում, վոր  
խմբած միավորումների մեջ մտնող կոլտնտեսություն-  
ներն աստիճանաբար ձուլվում են, և առաջ ե գալիս  
միասնական տնտեսություն: Կառուցելով խմբած միա-  
վորումներ, մենք ստանում ենք իրոք խոշոր հասա-  
րակայնացրած և մեքենայացրած տնտեսություններ,  
իրենց բոլոր առավելություններով, գյուղացիական  
մանր, քիչ լեկամուտ բերող տնտեսության հանդեպ:

Խմբած միավորումների կառուցման գործում  
պետութունը կոլտնտեսություններին լայն ոժանդա-  
կութուն ե ցույց տալիս: Կառուցումների համար հատ-  
կացված միջոցների հիմնական մասը պետութունը  
տալիս ե թե՛ իբրեւ վարկ և թե՛ իբրեւ անվերադարձ  
գումարներ գյուղատնտեսների հրավիրման, դպրոցնե-  
րի և հիվանդանոցների կառուցման համար:



## ԿՈՒՏՆԵՍԱՌԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍԵՎՑԵՆՆԵՐԸ ՇԵՎ ԲՅՈՒՐՈՆ

Կոլտնտեսութիւնները բացի զուտ արտադրական շահերից ունեն նաև ալլ շահեր: Նրանք՝ նախ և առաջ՝ կարիք ունեն կազմակերպչական ոգնության, չերկրորդ՝ իրավաբանական ոգնության, յերրորդ՝ կոլտնտեսական շարժման շահերի պաշտպանության զանազան հիմնարկութիւններում: Դրա համար ստեղծվում են գյուղատնտեսական կոոպերացիայի միութիւնները՝ կից կոլտնտեսութիւնների առանձին բլուրո և սեկցիաներ, իսկ վորոշ տեղերում, վորտեղ կոլտնտեսության շարժումն ավելի լայն չափերի յե հասել, մինչև իսկ կազմակերպվում են կոլտնտեսութիւնների հատուկ միութիւններ:

Կոլտնտեսութիւնների միութիւնները, սեկցիաները և բլուրոն ունենում են հատուկ հրահանգչական ապարատ, վորի նպատակն է ոգնել գյուղացիներին կոլտնտեսութիւնների կազմակերպման գործում, ոգնել կոլտնտեսութիւններին կարգի գցելու հաշվապահութիւնը և գործավարութիւնը, կազմելու կազմակերպչական-տնտեսական և արտադրական սլանները, կարգի բերելու խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի գործերը, նպաստելու կոլտնտեսութիւններին խմբած միավորումների կազմակերպման գործին, մամուլում պարզարանելու կոլտնտեսութիւնների շինարարական խնդիրները, կոլտնտեսութիւնների միութիւնները, սեկցիաները, բլուրոն մասնակցում են վարկերի բաշխման գործում, կոլտնտեսութիւնների վարկավորման և մատակարարման ծրագրերի կազմե-

լուն, կոլտնտեսութիւններին գրականութիւնն են հասցնում, դատարանում պաշտպանում են կոլտնտեսութիւնների շահերը: Կոլտնտեսութիւնն բազմազան տնտեսական ճշգրտի ղեկավարման համար անհրաժեշտ մասնագետներն պատրաստման նպատակով կոլտնտեսութիւնների միութիւնները, սեկցիաները և բյուրոն ինքնուրույն կամ ուրիշ հիմնարկների հետ մեկտեղ բաց են անում կուրսեր կոլտնտեսութիւն անդամներից հաշվապահներ, տրակտորային ղեկավարներ, տնտեսութիւնն առանձին ճշգրտի մասնագետներ պատրաստելու համար:

Սեկցիաների, բյուրոյի և միութիւնների միջոցները կազմվում են կոլտնտեսութիւնն փայլալճարներից և պետական նպաստներից:

### ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅՐԱՊԵՄԱՐՆԵՐԸ

Կոլտնտեսութիւնների սեկցիաները, բյուրոն և միութիւնները հրավիրում են կոլտնտեսութիւնն համագումարներ—շրջանային, նահանգային, հանրապետական և համամիութենական: Այդ համագումարներում քննվում են կոլտնտեսական շինարարութիւնն զանազան խնդիրներ և ընտրվում են միութիւնների և կոլտնտեսութիւնն կենտրոնների վարչութիւնները:

Այս համագումարներն ունեն չափազանց մեծ նշանակութիւն, վերլուծելու համագումարների շնորհիվ կոլտնտեսութիւնն անդամները փորձի փոխանակութիւնն են անում, կուլեկտիվ փորձի հիման վրա վերոշում են կոլտնտեսական կյանքի զանազան խնդիրները, և իրենց միութիւնների վարչութիւնների աշխատանքն են ղեկավարում:

Արտադրական պարզագույն միավորումը և կոլտնտեսությունը կարելի չէ կազմակերպել պարզ, առանց վորեն ցուցակագրումների և ձևակերպումների: Վոլգայի և Ուկրաինայի գյուղացիներն ունեյին, որինակ՝ միջանի տնտեսությունների միավորումներ, միացյալ ուժերով մեքենաներ գնելու և ոգտազործելու նպատակով: Այսպիսի միավորումներ գոյութուն ունեյին նաև մինչպատերազմյան շրջանում: Բայց ԽՍՀՄ-ում պարզագույն արտադրական միավորումները և կոլտնտեսություններն ոգտվում են պետութան կողմից հատուկ աջակցությամբ և դանտղան արտոնություններով: Նրանց արտոնություններ են տրվում գյուղատնտեսական միասնարկի նկատմամբ (զեղչ), վարկավորման նկատմամբ (նրանք վարկավորվում են առաջին հերթին, չերկար ժամանակամիջոցով և պակասեցրած տոկոսներով), մեքենաների մատակարարման նկատմամբ (պակասեցրած կանխավճար և յերկարացրած ժամանակամիջոց), հողաշինարարութան նկատմամբ (ձրիաբար և առաջին հերթին), անտառանյութի մատակարարման նկատմամբ (75 տոկոս զեղչ, իսկ մի շարք զեպքերում նաև անտառանյութի ձրի մատակարարում) և այլն:

Բայց վորպեսպի պետութունը կոլտնտեսություններին կարողանա տալ այս արտոնությունները և ժամանակությունը, անհրաժեշտ և ձևակերպել կոլտնտեսությունը, այսինքն՝ հաշվառման չեթարկել շրջանային (կամ գալառային) հողային վարչութան մեջ, վորն ստուգում է՝ համապատասխանում և արդյոք կոլ-



անտեսութեան կանոնադրութիւնը որենքի պահանջներին:

Կոլտնտեսութիւնը ձևակերպելու համար անհրաժեշտ է անել հետևյալը.

### ՀԻՄՆՈՂՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Արտադրական պարզագույն միավորում կազմակերպելու համար անհրաժեշտ է ունենալ 10-ից վոչ պակաս հիմնողներ: Կոլտնտեսութեան (կոմսունա, արտելի կամ հողի հասարակական մշակման ընկերութիւն) կազմակերպելու համար անհրաժեշտ է ունենալ 5-ից վոչ պակաս հիմնողներ: Հիմնողները պետք է բաժարարին հետևյալ պահանջներին. նախ և առաջ նրանք պետք է բանվորների և գյուղացիների սլատգամավորական խորհրդի համար իրավունք ունենան ընտրելու և ընտրվելու, լերկորդ՝ նրանք իրար նրկատմամբ չպետք է ունենան մոտ ազդակցական կապեր մինչ յերկրորդ պորտը ներառյալ (ծնողներ և յերեխաներ, քույր և չեղբայր, ամուսիններ, պապեր և թոռներ), յերկրորդ՝ նրանք չպետք է լինեն 18 տարեկանից փոքր:

Սրանից հետևում է, վոր ան բոլոր անհատները, վորոնք կարող են մասնել արտադրական պարզ միավորումներին կամ կոլտնտեսութեան մեջ, տակաւին իրավունք չունեն հիմնողներ հանդիսանալու:

Իրա համար, արտադրական պարզագույն միավորում կամ կոլտնտեսութիւն կազմակերպելու ժամանակ, նախ և առաջ, պետք է միավորման մեջ մասնել ցանկացողներից ընտրել հինգ (կոլտնտեսութեան համար) և կամ տասը (արտադրական պարզա-



դուզն միավորման համար) հոգի, վորոնք բավարարում են վերև հիշված պահանջներին, և վորոնք կըստորագրեն դիմումն ու կանոնադրությունը: Յեթե միավորման մեջ մտնել ցանկացողների թվում այդպիսի անհատներ կան, ուրեմն կարելի չէ գործը շարունակել:

### ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄՅԱԿՈՒՄԸ

Անհրաժեշտ է մշակել միավորման կանոնադրությունը: Որոնքը պահանջում է, վորպեսզի կանոնադրության մեջ անպատճառ նախատեսված լինեն հետևյալ խնդիրները.

1. Կազմակերպության անունը (որինակ՝ գյուղատնտեսական արտել «Պայծառ Կեսոր»):

2. Կազմակերպության վայրը (որինակ՝ Բրյանսկի նահանգի, Սևսկի գավառի, Սևսկի վոլոստի, Դորոժնոգոլոյի գյուղ):

3. Կազմակերպության նպատակը:

4. Անդամների ընդունելության, հեռանալու և վտարման պայմանները:

5. Ի՞նչպիսի պատասխանատվությունն են կրում անդամները (փայավճարի գումարի քանի՞ պատիկը) կազմակերպության պարտավորումների համար:

6. Դրամագլուխների կազմակերպման պայմանները և կարգը:

7. Մուտքի և փայավճարի չափը:

8. Այլ պարտադիր մուծումների սահմանված չափերը:

9. Հաշվետվություններ կազմելու, վերստուգելու և հաստատելու ժամկետները և կարգը:

10. Վնասների և ոգուտների բաշխման կարգը:

11. Ընդհանուր ժողովների հրավիրման ժամկետն ու կարգը:

12. Սուրհրդի և վերատուգիչ հանձնաժողովի իրավունքներն ու կազմը (անդամների թիվը):

13. Կազմակերպչութան լուծարքի պայմաններն ու կարգը:

14. Կանոնադրության փոփոխման կարգը:

Ինչպես կարելի չի նկատել այս թվարկումից՝ կանոնադրություն կազմելը բավականին դժվար գործ է: Ուստի և դուրսդատնետեսական կոլլեկտիվների Համամիութենական Կենտրոնական Միությունը՝ «Կոլլեկտիվները» մշակել և զանազան տեսակի միավորումների համար կանոնադրությունների որինակելի ձևեր: Այդ որինակներում բաց են թողած դատարկ տեղեր՝ ամեն մի առանձին միավորման վերաբերող տեղեկությունների լրացման համար: Այդ որինակները միշտ ել կարելի չե գնել դուրսդատնետեսական կոոպերացիայի մոտակա միության մեջ անձամբ կամ վարկաչին ընկերություն և կամ դուրսդատնետես միջոցով: Կարելի չե նմանապես դուրս գրել Կնիգոսոյուզից (Մոսկվա—Կենտրոն, Մանեֆնալա 17, Կնիգոսոյուզի գրքերի պահեստ): Նրանց հատը 10 կոպ. արժե: Այսպիսի կանոնադրություն ձեռք բերելուց հետո միավորման մեջ մտնել ցանկացողների ընդհանուր ժողովում պետք և ուշադրությունով կարդալ և քննարկել: Յեթե ժողովը կմտցնի վերևե փոփոխություններ և կամ լրացումներ, այդ դեպքում, կանոնադրության վերջում, վերտեղ այդ բանի համար հատուկ տեղ և թողած, պետք և ավելացնել այդ լրացումները:

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՎԱՌՈՒՄԸ

Կանոնադրությունը հաշվառման և լեւեթարկվում, ինչպէս մինք արդեն առաջինք, ռայոնական գործկոմում, իսկ այն տեղերում, վորտեղ շրջանացումը դեռ չի անցկացված և պահպանվել են գաղառները,—դավառային հողային վարչություններում: Կանոնադրությունը հաշվառման լեւեթարկելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալը.

1. Գնել կամ դուրս գրել կազմակերպվելիք միավորման տիպի որինակելի կանոնադրության յերեք որինակ և յերեք որինակ ել դուղի ընտանիքների գույքային ցուցակ:

2. Այս բոլոր որինակները լրացնել, վերջում ավելացնելով այն բոլոր փոփոխումները և լրացումները, վոր մտցրեց կանոնադրության մեջ ընդհանուր ժողովը: Յերեք որինակն ել պետք և ստորագրեն, նշելով՝ ազգանուն, անունը և հոր անունը, հիմնողները (5 հոգի, յեթի կազմակերպվում և կոլտնտեսություն, և 10 հոգի, յեթե կազմակերպվում է արտադրական պարզագույն միավորում):

3. Հատուկ ձևով կազմել ցուցակ միավորման մեջ բոլոր մտնել ցանկացողների, նրանց ստորագրություններով, վաղսրոք ստանալով այդ ձևը գլուղատնտեսական կոոպերացիայի միությունից կամ հողային վարչությունից:

4. Գրել դիմում կանոնադրությունը հաշվառման լեւեթարկելու մասին՝ մոտավորապէս այս ձևով.

## Մոսկվայի գալստի հոգային վաշուքյան

Ուլյանովսկի վոյստի Պոկրովսկոյե-  
Ստրեշնեո գյուղի «Պայծառ Կեսուր»  
գյուղատնտեսական արտել հիմնադներ՝  
Լոպատին Իվան Դենիսովիչից, Կորոտ-  
կին Ալեքսանդր Յակովլևիչից, Անդրեյե  
Իվան Ալեքսեյևիչից, Անիսկին Գրիգորի  
Անդրեյևիչից, Կուզնեցով Ալեքսանդր  
Վասիլևիչից

Դ Ի Մ Ո Ւ Ս

Սրան կից ներկայացնելով «Պայծառ Կեսուր»  
գյուղատնտեսական արտելի կանոնադրությունը և  
գյուղի ընտանիքների գույքային ցուցակը, խնդրում  
ենք այդ կանոնադրությունը հաշվառման չենթարկել  
և մոցնել կոոպերատիվ ընկերությունների ցուցակի  
մեջ: Կանոնադրությունը հաշվառման չենթարկելուց  
հետո և առհասարակ բոլոր գրադրությունները խընդ-  
րում ենք ուղղել հետևյալ հասցեյով՝ Լոպատին Իվան  
Դենիսովիչին, Մոսկվայի գալստի Ուլյանովսկի վո-  
յստի Պոկրովսկոյե-Ստրեշնեո գյուղի բնակիչ:

Ընկերության հիմնադիրներ՝ (Ստորագրու-  
թյուն ընկերության բոլոր հիմնադիրների)

Ծ. Այնուհետև պետք է գնալ գյուղխորհուրդ:  
Գյուղխորհուրդը պետք է ընկերության մեջ մտնել  
ցանկացողների ստորագրությունները հաստատի, իսկ  
դիմումի վրա անի մոտավորապես այսպիսի մակա-  
գրում. Պոկրովսկոյե-Ստրեշնեոյի գյուղխորհուրդը հաս-  
տատում է ստորագրությունները քաղաքացիներ՝ Լո-



պատին իման Դենիսովիչի, Կորոտկին Ալեքսանդր Յա-  
կովևիչի, Անդրեյև իման Ալեքսեյևիչի, Անիսկին Գրի-  
գորի Անդրեյևիչի և Կուզնեցով Ալեքսանդր Վասիլևիչի,  
նմանապես վկայում ե, վոր հիշյալ քաղաքացիներն  
իրար հետ մոտիկ ազգակցական կապեր չունեն և  
զրկված չեն ընտրողական իրավունքից:

(Կ. տ.) Նախագահ՝ (ստորագրություն)

Քարտուղար՝ (ստորագրություն)

6. Ուղարկել ռայոնական գործադիր կոմիտե  
(կամ գավառային հողային վարչություն) կանոնադրու-  
թյան և ցուցակի 3-ական որինակ և դիմումի 1 որի-  
նակ:

Հաշվառման համար պահանջված գովումներին  
համար գրողմանիչի կարիք չկա:

Հողային վարչությունը (կամ ռայոնական գործ-  
կոմը) պարտավոր ե մեկ ամսվա ընթացքում այդ  
կանոնադրության և ցուցակի մեկ որինակը վերա-  
դարձնել, հաշտելով, վոր այդ կանոնադրությունը հաշ-  
վառման չենթարկված ե:


Յեթե հաշվառման չենթարկող մարմինը մեր-  
ժում ե, այդ դեպքում պետք ե հայտնի, թե որեւքի  
վոր կետի հիման վրա կանոնադրությունը հաշվառ-  
ման չենթարկել չի կարելի: Այդ դեպքում կանոնա-  
դրությունը պետք ե փոխել ախպես, վոր նա չհակա-  
սի որեւքներին:


Յեթե կպարզվի, վոր հաշվառման չենթարկող  
մարմնի մերժումն անորինական ե և նա չի նշել որեւ-  
քի կետերը, վորի հիման վրա նա մերժում ե ցուցա-  
կադրել կանոնադրությունը, այդ դեպքում նրա վո-  
րջման դեմ կարելի չե բողոքել: Բողոքի համար տրո-

վում ե մեկ ամիս ժամանակամիջոց, հաշված հիմնադիրների՝ վորոշման պատճենն ստանալու որից, և բողոքն ուղարկվում է շրջանային հողային վարչութչանը, յեթե գտնվատը ռայոնական գործկոմի վորոշման մասին և, և նահանգական հողային վարչութչանը, յեթե գտնվատը գավառային հողային վարչութչան վորոշման մասին և:


## Ց Ա Ն Կ

|                                                                                                              | Եջ |
|--------------------------------------------------------------------------------------------------------------|----|
| Առաջարան . . . . .                                                                                           | 3  |
| I. Անհատորեն, թե արտելի միջոցով . . . . .                                                                    | 5  |
| II. Խնչպիսի կոլտնտեսություններ են լինում . . . . .                                                           | 18 |
| III. Կոլտնտեսության անդամների իրավունքները և պարտականությունները . . . . .                                   | 51 |
| IV. Կոլտնտեսությունների խնչպիսի միավորումներ են լինում, խնչպես և խնչ բանի համար նրանք ստեղծվում են . . . . . | 56 |









ԳԼԱ ՀԻՄՆԱՐԱՊ ԳԻՒՆ ԳՐԱԴ.




FL0039163

6199)

В. ГРИГОРЬЕВ

Какие бывают колхозы и как они  
строятся



ԳԻՆԸ 15 Կ.